

Սարգիս Գ. Պետրոսյան (Գյումրի)
Պատմ. գիտ. դոկտոր

**ԷՔԼԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՔՔԱԴԵՐԵՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԻ ԵՎ ԻՐ ԵՐԿՈՒ
ՏՈՀՄԱՊԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ***

Բանալի բառեր – Հայա/Հայկ, Արմի, Արման, ցեղ, տոհմ,
քոչ, օձ, տոտեմ, տեղանուն, անձնանուն, Մալում, Մուրի:

Մուտք

Որքան էլ ուսումնասիրվել են Հայկ Նահապետի վիպական կերպարը և պատմական Հայկի վերաբերյալ եղած տեղեկությունները, այդուհանդերձ բացեր դեռևս կան: Շատ հետազոտողներ անտեսել են Ասորիքի Էրլա քաղաք-պետության (մ.թ.ա. III հազ. երրորդ քառորդ) սեպագիր՝ հիմնականում տնտեսական-գործարքային բնույթի կարճ արձանագրությունները¹: Այնինչ դրանք վերաբերում են ոչ միայն Հայկ աստծուն և պատմական Հայկին, այլև հայ ժողովրդի կազմավորման օրրան Արմի երկրին և նրա երկու տոհմապետերին:

**1. Էրլայի արձանագրությունները
Հայա աստծու և պատմական Հայկի մասին**

Էրլայական արձանագրություններից մեկում հիշատակված է «Արմիցիների Ռաշապ աստվածը»²: Էրլացիները հարևան երկրի և

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.07.2023:

1 Տե՛ս «Древняя Эбла (Раскопки в Сирии)», составление и введение **П. Маттиэ**, Общая редакция и заключительная статья **И. М. Дьяконова**, М., «Прогресс», 1985:

2 **Гарелли П.**, Замечания по топонимике из архивов Эблы, «Древняя Эбла (Раскопки в Сирии)», с. 284.

օտար ցեղի աստծուն իրենց հայտնի Ռաշապ աստծու անունով են կոչել նրանց նույնաբնույթ լինելու պատճառով: Իսկ սեմական նախալեզվի ռթ «բոց» արմատով կազմված անուն կրող Ռաշապ աստվածը, կրակի և կայծակի անձնավորում համարվելով, նույնացվում էր միջագետքյան ⁴Ս.GUR ռազմիկ աստծու³ հետ: Հետագայում՝ մ.թ.ա. XIV դ., խեթա-հայասական հաշտության պայմանագրում (տեքստը խեթերեն է) ⁴Ս.GUR գաղափարագրով նշվել է Հայկական լեռնաշխարհի Հայասա երկրի գլխավոր ամպրոպաբնույթ աստվածը⁴: Եթե էբլայում ⁴Ս.GUR-ը նույնացվում էր կրակի ու կայծակի անձնավորում Ռաշապ աստծու հետ, ապա նույնպիսի մոտեցում կարող էր դրսևորված լինել նաև Հայասայում, այսինքն՝ միջագետքյան աստծու հետ Հայասայում կարող էր նույնացված լինել Ռաշապին համապատասխանող հայկական աստվածը՝ այլ աղբյուրներից հայտնի Հայա/Հայկը⁵: Որ դա այդպես է եղել, ցույց է տալիս ներքոբերյալը:

Նախ՝ **Հայա** և **Հայկ** անունների նույնական կիրառության մասին: Հայտնի է, որ կովկասյան ժողովուրդների ծագմանն անդրադարձած «Վրաց պատմության» («Քարթլիս ցխովրեբա») հեղինակը օգտվել է նաև հայկական աղբյուրներից⁶, բայց մեր նախահայր Հայկի անունն այնտեղ տրված է **Հաուս** ձևով՝ ծագած ***Հայոս**-ից: Հայտնի է նաև, որ վրացերենը յ հնչյուն չունի, իսկ **-ոս**-ը վրաց պատմիչի կողմից կատարված հավելում է. հմնտ. նույն տեղում բերված **Թարգամոս** (Թորգոմ), **Քարթլոս**, **Քարդոս**, **Հերոս**, **Էգրոս** նախնիների անունները⁷: **Հայա/Հայկ** նույնականությունն իր արտացոլումն է գտել նաև միջնադարյան «Բառգիրք հայոց» բառարանում: Դրանում

3 Ռաշապ աստծու մասին տե՛ս **Шифман И.**, Рашап, «Мифы народов мира. Энциклопедия», т. II, М., изд. «Советская энциклопедия», 1988, էջ 373:

4 Տե՛ս **Պետրոսեան Ս.**, Հին հայոց եռամասն ամսուայ խորհուրդը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1996, N 1-12, էջ 422, 427-429:

5 Ըստ Է. Ֆոռերի՝ **Պայասա**/***Պայասա** անվան հիմքում ընկած **Պայա**- բառը կարող էր լինել այրանուն (տղամարդու անուն), ցեղանուն կամ **դիցանուն**, իսկ **Պայասա**-ն՝ նշանակել «**Պայա** իր երկիրը» («den **Պայա** sein Land») կամ «**Պայա** երկիր» («**Պայա** Land») (տե՛ս **Forrer E.**, **Պայասա-Azzi**, “Caucasica”, Fasc. 9, Leipzig, 1931, **Капанцян Гр.**, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., изд. АН Арм. ССР, 1956, էջ 26):

6 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոնամախ», հատ. I: Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, կազմողներ՝ **Հովհաննիսյան Պ., Աբրահամյան Ա.**, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 110, 114 (թարգմանիչ՝ Վ. Մարտիրոսյան), ծան. 13:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 111-114:

կարդում ենք. «Հայք-հսկայք»⁸, այսինքն՝ **հայ**//«հսկա», երբ գրաբարում «հսկա» իմաստը վերագրվում էր հենց Հայկին. հմմտ. **հայկաբար** «իրեն զՀայկ՝ ահաւոր գօրութեամբ, ուժով. **հսկայաբար**. դիցազնաբար»⁹ և **հայկաչափ** «ունօղ զչափ հասակի Հայկայ. **հայկաձև**. վիթխարի»¹⁰: Թե՛ Հայա-ն, թե՛ Հայկ-ը «հայր» նշանակող դիցանուններ են՝ ծագած հ.-ե. *pə-ajə- նախաձևից¹¹, որի երկրորդ բաղադրիչը վերջածանց է: **Հայկ** տարբերակում առկա է նաև **-կ** աճական մասնիկը. հմմտ. **բող-կ**, **լեր-կ**, **հար-կ** (**-անել**), **-մեղ-կ**, **մուր-կ**, **փեղ-կ**:

Էրլայական տեքստերի հայկական նյութերից ուշագրավ է Ռաշապ, այսինքն՝ Հայա/Հայկ աստծու և **Արմի** կոչված երկրների փոխադարձ կապը բացահայտող հետևյալ հատվածը. «^drasap armi^{ki} armi^{ki}» // «Ռաշապ աստվածը Արմի երկրի [և] Արմի երկրի»¹²: Էրլայագետ Պ. Գարելլին ապացուցում է, որ Armi-ն տեղանուն է¹³, ուստի դժվար չէ կռահելը, որ **Արմի** անունով էրլացիները երկու երկիր են ձանաչել, որոնց միավորել է Rašap//Հայա/Հայկ աստծու պաշտամունքը: Ավելի ուշ Էրլան գրաված և կործանած Աքքադի Նարամ-Սուեն թագավորը (գահակալած մ.թ.ա. XXIII դ.)¹⁴ երկու Արմիների փոխարեն հիշատակում է մեկ Armanum (վերջնամասի -um-ը աքքադ. ուղղ. հոլ. վերջավորությունն է) և նրա Rid-Tešub//Rid-Adad (կարդում են նաև Riš/Tešub կամ Riš-Adad) կոչված թագավորին¹⁵: Անվան երկրորդ բաղադրիչը տրված է ^dIM գաղափարագրով, որն աքքադացի գրիչները կարդում էին Adad, իսկ խեթ ու խուտի գրիչները՝ Թեշուր: Նույն գաղափարագիրը հետագայում Ուրարտում հատկացվում էր այդ աստվածներ-

8 «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Հ. Անայանի**, Եր., ՀՍՍ ԳԱ հրատ., 1975, էջ 179:

9 **Անտիքեան Գ., Միրմելեան Խ., Ազգեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. II, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 31:

10 Նույն տեղում, էջ 32:

11 Տե՛ս **Петросян С.**, Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1987, N 3, էջ 83-86:

12 **Гарелли П.**, указ. соч., с. 284, прим. 1.

13 Տե՛ս նույն տեղում, էջ 284-285, ծան. 9:

14 Տե՛ս **Авдиев В.**, История древнего Востока, Л., Гос. изд. политической литературы, 1953, էջ 64:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 68, **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 70:

րին համապատասխանող անպրոպային Թեյշեբա աստծուն¹⁶: Հայկի այս սերնդի (թո՞ռ, ծո՞ռ) անվան մեջ անպրոպի աստծուն նշող գաղափարանշանի առկայությունը հստակ ցուցում է նրա հայկյան ծագման մասին: «Վրաց պատմության» մեջ նշվում է, որ Նեբրովթի (Բել) դեմ մարտում Հաոսը (Հայկ) իր գորքին «քաջալերում և մխիթարում էր ահարկու ձայնով, որ նման էր **կայծակի ճայթյունի**»¹⁷:

Հայտնի է, որ հին թագավորները որպես գահանուն կամ պատվանուն կրում էին իրենց պաշտած աստվածների անունները կամ դրանց մակդիրները: Պատմական Հայկը **Հայա** անվանը վկայված է էբլայական արձանագրություններից մեկում, որը վերաբերում է էբլայի վերջին թագավոր Իբբի Զիբիրի նախորդ Էբրիում արքայի ժամանակաշրջանին¹⁸: Էբլա ժամանած երկու արմիցիներից բացի՝ այնտեղ հիշատակված է ինչ-որ միջնորդ, որը **Հայա** անունով մեկին պետք է հասցներ «1 գերազանց որակի գործվածք, 1 նուրբ գործվածք, 1 գույնզգույն հագուստ՝ Հայայի միջնորդին», ապա նշվում է. «1 սկավառակ 20 սիկղ ոսկուց՝ Հայային»¹⁹: Հասկանալի է, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է իրական անձնավորության՝ իր աստծու **Հայա** անունը կրող պատմական Հայկին, իր ցեղի երկու տոհմերը՝ երկու Armi-ները ներկայացնող Հայկին:

16 Տե՛ս **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., Հայաստանի ԳԱ հրատ., 1990, էջ 41-43:

17 «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա», հատ. I, էջ 113:

18 Տե՛ս **Արկի Ա.**, Заметки о географическом кругозоре текстов Эблы III тысячелетия до н. э., «Древняя Эбла (Раскопки в Сирии)», էջ 311:

19 **Иванов В.**, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, «Հայկագուսիներ. Նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին», Եր., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 451-452: Հայ. **սիկղ** բառը գալիս է հուն. **սիկլոս** բառից (Աստվածաշունչ), սա՝ եբր. **շեքել**-ից, իսկ սա էլ, հավանաբար, արքադերենից. հմմտ. ասուր. արքադ. šiklu «սիկղ» < ša-ka-lu «կշռել» (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հատ. IV, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 213): Բաբելոնում sikl/šekel-ը հավասար էր 8.4 գրամի (տե՛ս «История древнего Востока», Под ред. **В. И. Кузичина**, М., «Высшая школа», 1979, էջ 448): Հին հրեաներն ունեին սովորական սիկղ՝ հավասար 6.8 գրամի, և սրբության սիկղ՝ հավասար 13.6 (կամ 13.3...) գրամի (տե՛ս **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԲԲ), հատ. IV, Եր., ՀՍՍՌ պետական հրատ., 1945, էջ 214): Անշուշտ, վերջին կշռաչափը ևս ավելի վաղ շրջանից է գալիս: Ամենայն հավանականությամբ, դրանով է չափվել Հայա/Հայկին էբլայի պետական գանձարանից ուղարկված՝ 20 սիկղ ոսկուց պատրաստված սկավառակի քաշը, որովհետև այն եղել է էբլայի Էբրիում արքայի նվերը Արմիի ցեղապետ-արքա Հայային:

Նույն *Armi* անվան տակ միավորված երկու երկրների գոյությունը պայմանավորված է եղել դրանք միասնաբար ներկայացնող ցեղապետ-արքայի՝ երկու տոհմապետերից բարձր կանգնած անձի՝ պատմական Հայկի գոյությամբ: Համարվում էր, որ նախնադարյան ցեղը կազմված է երկու տոհմից, որոնցից մեկն ըմբռնվում էր արական-հայրական տոհմ, իսկ մյուսը՝ իգական-մայրական: Հայկական լեռնաշխարհում սովորաբար արական-հայրական տոհմը հանդես էր գալիս քոչի (քաղ, նոխազ, արու այծ) տոտեմով, իսկ իգական-մայրականը՝ օձի: Հայկի՝ առաջինին պատկանելու մասին խոսում են այն ժայռապատկերները, որոնցում նրա խորհրդանիշ քոչի և նրա խորհրդանշան Հայկն համաստեղության գծապատկերները ներկայացված են միասին, անգամ միաձույլ²⁰:

Հայկի արական-հայրական տոհմի բուն տիրույթը եղել է Արմիներից հյուսիսայինը՝ ընկած Արևմտյան Տիգրիսից հյուսիս, որի անունը ուրարտական սեպագրությամբ ավանդված է *Arme* ձևով²¹: Այս *Arme*-ն նախապես կարող էր վերաբերել ոչ միայն հետագայի Նփրկերտ և Անգեղտուն գավառներին, այլ նաև Քաղ գավառին և Քաղիրթ գետի ձորահովտին: **Քաղ-իրթ** գետանունը **քաղ** «քոչ, նոխազ» բաղադրիչով կազմված բարդ բառ է, որի երկրորդ բաղադրիչը **երթ** «ընթացք, երթալը»²² բառն է՝ ենթարկված **ր**-ից առաջ **ե > ի** հնչյունափոխության: Քաղիրթ գետը Արևմտյան Տիգրիսի ամենամեծ վտակն է: Դրա վերաբերյալ «Աշխարհացոյց»-ում կարդում ենք. «Եւ ամենայն քամ ի

20 Տե՛ս **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.**, Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, աղ. 246, նկ. 1, աղ. 122, նկ. 2, աղ. 114, նկ. 4, **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 6, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, նկ. 150, **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, «Դայիր» հրատ., 2008, էջ 15, նկ. 2, Ա, Բ, Գ, Դ:

21 Տե՛ս **Меликишвили Г.**, Урартские клинообразные надписи (այսուհետ՝ УКН), М., изд. АН СССР, 1960, № 156 DI, DII: Ըստ Բ. Պիտրովսկու՝ *Arme* երկրանվան -me վանկը կարելի է նաև -mi կարդալ, այսինքն՝ *Arme//Armi* (տե՛ս **Пиотровский Б.**, Ванское царство (Урарту), М., изд. Восточной литературы, 1959, էջ 124):

22 Տե՛ս ՀԱԲ, հատ. II, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1973, էջ 53: Սրանց հնդեվրոպական ծագման վերաբերյալ տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 130, **նույնի՝** Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետ՝ ՀՍԲ), Եր., «Ատոլիկ» հրատ., 2010, էջ 225: **Երթ**-ի իմաստը գետին վերագրելու համար հմնտ. դրախտի չորս գետերից «Եւ գետն երրորդ՝ Տիգրիս, նա է որ երթայ յանդիման Ատրեստանի» (Աստվածաշունչ, Ծանոթոց, Բ, 10-16) և «Տիգրիսն երթալ ի Տիգրանակերտ//Դիարբեքիր» (Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. II, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 416):

լերանց Հայոց ի Դիլաթ (իմա՝ Տիգրիս – Ս. Պ.) իջանէ. նախ Քաղիթթ, որ բղխէ ի լերանց Սալնայ և Սանասնոյ, և իջեալ կտրէ յիրերաց գՆփրկերտ և գՔղիմար...»²³: Վերջինները գավառներ են «Աշխարհացոյց»-ում նշված Մեծ Հայքի Աղձնիք նահանգում: Դրանցից Նփրկերտը՝ Տիգրանակերտի²⁴, իսկ Քղիմարը բուն (արևելյան) Աղձնիքի գավառն է: Սրանք, ինչպես նշվեց, ժամանակին մասն են կազմել Հայկի ոստանի:

Նփրկերտ գավառն ընդգրկած երկիրը միջին և ուշատրեստանյան արձանագրություններում հիշատակվող Šubria-ն է, որը հայտնի է նաև Šubrê ձևով²⁵: Այս երկրանվան հիմքում հ.–ե. *kubh-ro- նախաձևից ծագած հնագույն հայերեն *սուրբ > սուրբ (բբ > բբ դրափոխությամբ)²⁶ «մաքուր, անարատ, սրբազան, սուրբ» բառն է, որին ծագումով և իմաստներով առավել մոտ է հին հնդկերեն (սանսկրիտ) çubhrá «մաքուր, պարզ, պայծառ, գեղեցիկ» բառը²⁷: Ուրարտական արձանագրություններից մեկում հենց Շուրբիան է կոչված Arme²⁸: Այս տեղանվան հիմքը նույնական է հայոց մայրաքաղաքներից մեկի սրբազան **Արմաիր** անվան և «փյունիկ» սուրբ թռչնի **արմալ** (< *արմ–հալ) անվան **արմ** արմատի հետ: Սրանց արմատակիցներից են լինելու հուն. Ἄρμα տեղանունը (Ատտիկայի այս վայրում էին գուռակներն սպառում մարգարեական նախանշանների հայտնվելուն) և Ἄρμη «սպիտակություն» բառը²⁹:

23 **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., ՀՍՍՌ ԳՎ հրատ., 1963, էջ 114:

24 Տե՛ս դրա քարտեզը:

25 Տե՛ս **Дьяконов И.**, Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետ՝ АВИИУ), «Вестник древней истории», 1951, № 2, 3, 4, надписи №№ 23, 26, 29, 67, 68, 73:

26 Տե՛ս **Петросян С.**, Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «Լրաբեր» հաս. գիտ., 1986, N 4, էջ 61: Arme-ն լինելու է Armi-ի հետին ձևը: Իսկ –i-ն՝ որպես տեղանվանակերտ վերջածանց, առկա է նաև սեպագիր Alli, Alzi, Arhi, Aruši, Azi/Azzi և այլ տեղանուններում: Նույն կերպ Šubrê-ն է լինելու Šubria-ի հետին ձևը, իսկ Šubria < հ.–ե. *kubh-r-ijā:

27 Տե՛ս ՀԱԲ, հաս. IV, էջ 256:

28 Տե՛ս УКН, № 156:

29 Տե՛ս «Древнегреческо-русский словарь». Составил **И. Х. Дворецкий**, т. I, М., Гос. изд. иностранных и национальных словарей, 1958, էջ 236, **Гамкрелидзе Т., Иванов В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тб., Изд. Тбилисского университета, 1984, էջ 229:

2. Հայկի թագադրման վայրի մասին

Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95–55 թթ.) մասին Ստրաբոնը նշում է, որ նվաճումներից հետո, «Այս բոլորով հզորացած՝ Օլիբերիայի մոտ կառուցեց մի քաղաք՝ այս տեղի և Եփրատի կամուրջի միջև, որ կոչեց Տիգրանակերտ...»³⁰, իսկ Ապպիանոսի վկայությամբ՝ Տիգրանակերտը կառուցվել էր այն վայրում, որտեղ Տիգրանը թագադրվել էր³¹: 'Օլիբորիա անունը հունականացված ձևն է այն նույն անվան, որը խեթական արձանագրություններում հիշատակվում է Սլիլի/Սլիլի ձևով, իսկ ուրարտական և ասորեստանյան արձանագրություններում՝ Սլլիբա/Սլլիբա: Այս երկրի հարևանությամբ են խեթական արձանագրությունները հիշատակում Armana, իսկ ուրարտականները՝ Arme երկիրը³², այսինքն՝ երկու Armi-ներից (ըստ էրլայական արձանագրությունների) հյուսիսայինը: Սլիլի/Սլլիբի/Օլիբերիայի հարևան երկրում՝ հետագայի Նփրկերտ գավառում, պետք է որ Տիգրան Մեծը թագադրված լիներ, ապա և կառուցեր հայոց նոր մայրաքաղաքը: Անտարակոյս, Տիգրան Մեծն ինչ-որ կարևոր նկատառումով էր իր պապ Արտաշես I-ի կառուցած հռչակավոր Արտաշատ մայրաքաղաքից գերադասել Մեծ Հայքի ծայրամասում գտնվող այդ վայրը և այնտեղ թագադրվել: Դա հայոց արքաների ավանդական թագադրման վայրն էր լինելու Տիգրան Մեծից շատ առաջ:

Մեր կարծիքով՝ Տիգրանակերտ քաղաքի **Նփրկերտ** անվան **նփր**- բաղադրիչը սղված ձևն է **Նեկփառ** անձնանվան: Սա արամեատառ ոգր (գիտական տառադարձությունն է) գրությամբ հայտնի է Արտաշես I-ի (մ. թ. ա. 189–160 թթ.)՝ Սյունիքի սահմանաքարի արձանագրությունից: Տեղանվան մեջ հիմք անձնանվան սղման համար հմնտ. **Արտաշես**, որից՝ **Արտաշաշատ** > **Արտաշատ**, **Մանաուզ**, որից՝ **Մանաուզակերտ** > **Մանազկերտ**, **Վաղարշ**, որից՝ **Վաղարշակերտ** > **Վլաշկերտ** և այլն: Արձանագրության մեջ անվանակիր անձը

30 Strabo, XI, 14, 15 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1940, էջ 67).

31 Տե՛ս App; Mithr., 67 (Մանանդյան Հ., Տիգրան երկրորդը և Հռոմը, Եր., Արմֆանի հրատ., 1940, էջ 28):

32 Տե՛ս АВИИУ, №№ 26, 42, 43, 44, УКН, № 28, Арутюнян Н., Бнайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ер., изд. АН Арм. ССР, 1970, էջ 22, ծան. 51, էջ 84, ծան. 316:

«թագադիր» է կոչված: Թագավորի անվան հետ թագադիր Նեկփա-
ռի անվան հիշատակումն ընկալվելու էր որպես արքայական արձա-
նագրության վավերականությունը հաստատողփաստ:

Ինչպես Գ. Սարգսյանն է նշում, սա հնարավոր է դարձնում
պարզել «ոչ միայն այն, որ Արտաշեսի օրոք Հայաստանում արդեն
գոյություն է ունեցել «թագադիրի» բարձր պաշտոն, այլև այն, որ Ար-
տաշես Ա-ի օրոք այդ պաշտոնը կրող անձնավորությունը մեծ դեր է
խաղացել պետության մեջ, եղել է թագավորի մերձավորը: Այսպի-
սով, պատմական թագադիր Նեկփառին և Խորենացու հիշատակած
թագադիր Սմբատին (իմա՝ Սմբատ Բագրատունուն – Ս. Պ.) մերձեց-
նում է իրար նրանց տիտղոսը և թագավորի նկատմամբ նրանց դիր-
քը»³³: Որ Երվանդունի թագավորների օրոք ևս գոյություն է ունեցել
թագադիրի պաշտոնը, Երվանդ Վերջինի առնչությամբ (մ. թ. ա. III
դարի վերջին տասնամյակներ) հաղորդում է Մովսես Խորենացին:
Ըստ նրա աղբյուրի՝ հայոց մեծամեծները «միաբանէալ թագաւորեցու-
ցին զնա, առանց արանց յազգէն Բագրատունէաց լինել թագադիր»³⁴:

Եթե Հին Հայաստանում եղել է թագադիրի գործակալությունը,
ուրեմն պետք է լիներ նաև նրա ձեռական իշխանության երկիրը՝ այն
երկիրը, որտեղ նա թագադրում էր թագավորին, որտեղ, սակայն, նա
իշխում էր որպես արքունի գործակալ³⁵: Այդ երկրի գոյության մասին
է վկայում Հյուսիսային Միջագետքի վերաբերյալ Ստրաբոնի հետև-
յալ հաղորդումը. «Միջագետքի լեռնային մասը բավական բարեբեր
է. Եփրատի և Ջուգանյի մոտակայքը.... բնակվում են միգդոնացիք
(այսպես են կոչել սրանց մակեդոնացիք). այդտեղ են Մծբին (որ կոչ-

33 **Периханян А.**, Арамейская надпись из Зангезура, «Պատմա-բանասիրական հանդես»,
Եր., 1965, N 4, էջ 108, **Սարգսյան Գ.**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և
Մովսես Խորենացին, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 174:

34 **Մովսիսի Խորենացու** պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը՝ **Մ. Աբեղյանի** և
Ս. Հարությունյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, գիրք Բ, գլ. 1է:

35 Բագրատունի թագադիրների բուն տիրույթը գտնվել է Բարձր Հայքի մերձպար-
խարյան Սպեր գավառում, որտեղ նրանց տոհմավազը կրում էր «**Ասպետ**» տիտղո-
սը: Մերձպարխարյան Տայքի **Արսեաց փոր/Ասեաց փոր** գավառի, նրա **Արսիս** կենտ-
րոնի անունների (որոնք նշանակում են «Արսիների ձոր» և «Արսիներ») և «**Ասպետ**»
տիտղոսի հիմքում *արս- < հ.-ե. *prk- «կող, կողմ» բառն է, որից՝ *արս-պետ > **աս-
պետ** «կողմնակալ»: Հմտ. իրանական փոխառություն համարվող *պարս-պատ
նույնարմատ և նույնիմաստ բառը, որից ունենք **Պարսպատունի** նախարարական
տոհմանունը և **Պարսպատունիք** գավառանունը: Այդ մասին տե՛ս **Պետրոսյան Ս.**,
«Ասպետ» տիտղոսի և «ասպետություն» գործակալության նախնական բնույթի պար-
զաբանման փորձ, «Լրաբեր» հաս. գիտ., 1983, N 4, էջ 77-85:

վել է նաև Միզդոնիո Աստիոք, գտնվում է Մասիոս լեռան ստորոտը), Տիգրանակերտ, Կարբեսի շրջակայքը, **Նիկեփորի երկիրը** (ընդգծումը մերն է – Ս. Պ.), Քորդիբազա և Սիննակա, ուր կորավ Կրաստոսը՝ պարթևաց զորավար Սուրենի թակարդի մեջ բռնվելով»³⁶: Նախ ճշտենք այս հաղորդման մեջ տեղ գտած ակնհայտ շփոթությունը: Մ. թ. ա. 53 թ. Հյուսիսային Միջագետքի Խառան բնակավայրից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում հռոմեական բանակը ջախջախիչ պարտություն էր կրել ոչ թե Սիննակայի, այլ Կարբեսի (հուն. Κάρασι, լատին. Carra) շրջակայքում, իսկ սա Խառանն է, որը, ընկած լինելով Մասիոն լեռնաշղթայից հարավ-արևմուտք³⁷, չէր կարող լինել Տիգրանակերտ քաղաքի կամ գավառի հարևանը, որն ընկած էր Արևմտյան Տիգրիսից հյուսիս:

Նույն կերպ «Նիկեփորի երկիրը» (հուն. Νικηφόριον χωρία) չէր կարող հարևան լինել «Կարբեսի շրջակայքին», այսինքն՝ Խառանի շրջանին, որովհետև անունից անգամ պարզ է, որ այն համապատասխանել է Նփրկերտի շրջանին: Ըստ երևույթին, Ստրաբոնի երկի նախնական տեքստում բերված են եղել քաղաքի թե՛ նախկին՝ ***Նեկփառակերտ** (որից՝ **Նփրկերտ**) և թե՛ հետին՝ **Տիգրանակերտ** անուններն ու արժանացել տարբեր տեղորոշման: Նփրկերտ քաղաքի անունը, Միջնադարում նոր սղման ենթարկվելով, վերածվել էր **Նփոռետ**-ի³⁸: Սա արդեն խոսում է այն մասին, որ տեղանվան հինք **Նեկփառ** անձնանունը, ի տարբերություն իր համարժեքը համարված **Նիկեփոր**-ի, անձանոթ էր տեղի բնակչությանը: Վերջինը հունարեն բառ է՝ «հաղթանակաբեր, հաղթական» նշանակությամբ, և հույների ու մակեդոնացիների կողմից համարվել է **Նեկփառ**-ի համարժեքն այնպես, ինչպես **Օրոնտաս/Օրոնտես**-ը՝ մեր **Երուանդ/Արուանդ**-ի: Դրանք տարբեր ծագումով անձնանուններ են: **Նեկփառ**-ի հին պարսկական ծագ-

36 Strabo, XVI, 1, 23 (Ստրաբոն, էջ 91):

37 Տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 55, 65 և քարտեզը:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 73, 107: Ն. Ադոնցը 115 տարի առաջ էր փորձել կռահել **Նփր-կերտ** տեղանվան առաջին բաղադրիչի նախաձևը, իսկ երկրորդ բաղադրիչը քաջ հայտնի **կերտ** բառն է՝ կիրառված նաև որպես տեղանվանակերտ վերջածանց: Նկատի առնելով Տակիտոսի հաղորդումը Տիգրանակերտի՝ Նիկեփորիոս գետի ափին գտնվելու մասին (տե՛ս Tac., Ann., XV, 4)՝ նա կապ էր տեսնում այդ Nicophor-ius-ի, հայ. **նրփոր**-ի և ասոր. maifar-ի միջև՝ վերականգնելով դրանց *nakfar նախաձևը (տե՛ս Адоиц Н., Армения в эпоху Юстиниана, Издание второе, Ер., изд. Ереванского университета, 1971, էջ 7, ծան. 1): Այս նախաձևը, ինչ խոսք, բավականին նման է **Նեկփառ** (ոգր) անվանը:

ման մասին խոսում է նրա –**փառ** բաղադրիչը, որով են կազմված հին պարսկական մի շարք անձնանուններ, օրինակ՝ Artafarnah, Bagafarnah, Fradahfarnah, Vindafarnah և այլն: Հմնտ. հայոց մեջ գործածված **Փառնաւազ** և **Փառնէրսեհ** անձնանունները: Սրանցում **փառ/փառք** բառի նախնական իմաստը եղել է «փայլ, լույս», որից՝ «վեհություն, մեծություն, շուք», «հոչակ, համբավ, բախտ» փոխաբերական նշանակությունները³⁹: **Նեկփառ** անձնանվան արամեատառ ոգ- սկզբնամասն արտացոլում է միջ. պարս. nēk/nik «լավ, բարի» բառը, որից էլ արմատի կրկնությամբ ծագել է հայոց մեջ գործածված **Նէքնէք** անձնանունը⁴⁰: Ըստ այսմ՝ Արտաշես I-ի թագադիրի **Նեկփառ** անունն ունեցել է «բարեհամբավ, բարեփառ» կամ դրանց մոտ իմաստ: Թերևս այն ոչ թե անձնանուն էր, այլ պատվանուն:

Բնակավայրի ***Նեկփառակերտ** հին անվանումն արդեն փաստում է իր հիմնադիր Նեկփառի՝ բավականին անկախ գործունեություն ծավալած լինելու մասին: Բայց այս բնակավայրն ընդգրկված է եղել արքունի տիրույթում: Ենթադրել կարելի է, որ Սելևկյաններից մեկը Արևմտյան Տիգրիսի հովտում իր տիրապետության տարիներին Բագրատունի տոհմից **Նեկփառ** անունով թագադիրին գավառի սեփականատեր է ձանաչել: Մովսես Խորենացու հաղորդումներից պարզ է դառնում, որ արքունի տիրույթում այլ տոհմի ներկայացուցչի անունով բնակավայրը եթե ոչ Արտաշես արքայի, ապա նրա որդիների աչքի փուշն էր դարձել: Չնայած իր՝ Արտաշեսին մատուցած բազում ծառայություններին՝ Սմբատը ստիպված է եղել հեռանալ Նփրկերտից: Նա «հրամանաւ Արտաշեսի բնակէ ի Տնորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերոյն. քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեայց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ և գնորին կողմամբք բնակեցաւ»⁴¹: Խորենացու նշած երկու պատճառներից թերևս առաջինն է ձիշտ, այն է՝ Սմբատը Արտաշեսի հրամանով է հեռացել և հաստատվել Սելևկյաններից նոր նվաճված Տնորիքում: Իսկ Նփրկերտ գավառը՝ որպես հայոց թագավորների թագադրման ավանդական վայր, վերադարձվել

39 St' u **Brandenstein W., Mayrhofer M.**, Handbuch des Altpersischen, Wiesbaden, Otto Harrassowitz, 1964, էջ 118, 153, ՀԱԲ, հատ. IV, էջ 482-483:

40 St' u **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. IV, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1948, էջ 72:

41 **Մովսիսի Խորենացույ** պատմութիւն Հայոց, Բ, ծգ:

էր արքունիքին: Այստեղ էլ հետագայում, ավանդույթի համաձայն, թագադրվել է Տիգրան Մեծը, ապա՝ կառուցել հայոց նոր մայրաքաղաք Տիգրանակերտը⁴²:

Ամենայն հավանականությամբ, այդ ավանդույթը եկել է Հայկից, որն այդտեղ էր օծվել Հայկազանց ցեղամիության ցեղապետ-արքա և հռչակվել թագավոր: «Վրաց պատմության» մեջ նշվում է, որ դատելի էր ունեցել Հառու//Հայկի տարած հաղթանակից անմիջապես հետո. «Այնժամ վայր ընկավ Ներբովթը (իմա՝ Բելը - Ս. Պ.), և նրա բանակը փախուստի դիմեց: Եվ ձերբագատվեցին Թարգամույան տոհմերը: Այնժամ Հառուը իրեն արքա հռչակեց իր եղբայրների և այլ մերձակա սահմանակից տոհմերի (ցեղերի) վրա: Իսկ այս յոթ եղբայրները գնացին՝ յուրաքանչյուրը իր երկիրը և հպատակ էին Հառուին»⁴³: Հաղորդման վերջնամասում նշված են ինչպես Հայկի՝ Հայկազանց ցեղամիության գերագույն ցեղապետ-արքա ճանաչվելու, այնպես էլ ցեղամիության ընդարձակման հանգամանքները: Նույնն են վկայում Գեղամա լեռների ժայռապատկերները, որոնցում ցեղամիության գերագույն աստված հռչակված Հայկը՝ պատմական Հայկ աստվածը, ներկայացված է անկյունավոր 8-աձև մարմնով (Հայկն համաստեղության խորհրդանշանը), նետաձև գլխով (նետաձիգ աստված էր), աջ ձեռքին խաչ (արևի խորհրդանիշը), ձախ ձեռքին բումերանգ (ամպրոպ-կայծակի խորհրդանիշը)⁴⁴: Մահվանից հետո պատմական Հայկը նույնացվել է նրա հետ⁴⁵:

42 Այդ ավանդույթը, հավանաբար, փորձել է շարունակել Ներոնի համաձայնությամբ և Կորբուլոնի կողմից Տիգրանակերտում Մեծ Հայքի թագավոր կարգված Տիգրան VI-ը (60-61 թթ.), որն այդտեղ էլ պետք է թագադրված լիներ:

43 «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. 1, էջ 114:

44 Տե՛ս **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.**, նշվ. աշխ., նկ. 309, **Պետրոսյան Ս.**, Խեթական արքա Սուպիլուկիումա I-ի կնիքի և հայկական երկնային խորհրդանշանների ընդհանրությունները, «ՎԷՆ», Եր., 2020, N 1, էջ 28-30, նկ. 3ա, 3բ: Հայկ աստծո խորհրդանշանը «Նշանագիրք իմաստնոց»-ում տրված է նաև «փայլակն» բացատրությամբ (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց գրերը. Ցուցակ հայկական հին նշանագրերի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1984, N 280, 432, **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1973, էջ 240, 242), երբ այդ բառով նշվում էր ոչ միայն կայծակի արձակած լույսը, այլև արևի լույսը (իմնտ. «Որպես փայլակն՝ որ ելանէ յարևելից, և երևի մինչև յարևմուտս» («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. II, էջ 928)): Դա հասկանալի կլինի միայն այն դեպքում, եթե այդ խորհրդանշանը կրած աստվածը՝ Հայկը, ըմբռնվել է թե՛ ամպրոպ-կայծակի և թե՛ արևային լույսի անձնավորում աստված:

45 Երկրի վրա նրա մարմնավորումը համարված պատմական Հայկը ևս, բնականաբար, նույնպիսին էր ըմբռնվելու: Թագավորի նման ընկալումը հատուկ էր նաև

3. Հայկի թաղման վայրի մասին

Որտե՞ղ կարող էր լինել Հայկի գերեզմանը: Հավանաբար այնտեղ, որտեղ որ նա վախճանվել է: Մովսես Խորենացին այդ վայրը համարում է Հարքը: Նա, հղում անելով Մար Աբասին, հաղթանակից հետո Հայկին բերում է նախ Կադմոսի մոտ՝ իր հին ոստան, ապա՝ վերադարձնում Հարք: Ըստ Անանուն պատմիչի՝ հաղթանակից հետո «Հայկն դարձաւ ի տեղի իւր. և չոգաւ կալաւ Հայկն գերկիրն Արարադայ», «և ի ժամանակի մահուան իւրոյ ետ զնա կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում» «և Արամենակայ հրամայեաց երթալ ի հիւսիսակողմ, ուր ինքն իսկ դադարեաց զառաջինն»⁴⁶:

Կարծում ենք՝ ճիշտ է Անանուն պատմիչը, ըստ որի՝ Հայկը վախճանվել է «Արարադայ երկրում»՝ Արևմտյան Տիգրիսի ավազանում, որը հետագայում ներառել է Կադմոսիսին ևս: Խորենացին էլ հաղթանակից հետո Հայկին բերում է Կադմոսի մոտ, բայց հետո վերադարձնում է Հարք: Ինչո՞ւ է Պատմահայրն այդպես վարվել: Հավանաբար, նա, ստուգելով և ժողովրդական ավանդությանը հավատ ընծայելով, Հայկի մահվան վայր է համարել Հայկաշենը: Վերջինիս առնչությամբ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Իսկ Աստվածաշեն՝ գուցե լինի Հայկաշեն. թեև պատմիչները զՀայկաշենն Մանազկերտի մոտերը ցույց կուտան»⁴⁷: Իսկ եթե Հայկաշենը Մանազկերտի մոտ է, ուրեմն պատմական Հարքում է: Այսինքն՝ Հայկաշենի նման տեղորոշման հետևանքով է Մովսես Խորենացին իբրև Հայկի մահվան վայր նշել Հարքը: Իրականում Հայկը վախճանվել է իր տոհմական տիրույթում՝ էբլացիներին հայտնի երկու Արմիններից հյուսիսայինում:

Բնական է, որ մահամերձ մարդը կուզենար թաղվել իր ոստանում՝ տոհմակիցների կողքին: Այս դեպքում հարց է առաջանում. ին-

մեր նախնիների հարևան առքեստանցիներին: Այդ է վկայում դարեր անց Ասորեստանի թագավորներից մի քանիսի Շամշի-Ադադ գահանունը: Նրանցից առաջինը գահակալել է մ. թ. ա. 1813-1781 թթ., իսկ հինգերորդը՝ հանրահայտ Շամմուրամաթ/Շամիրամի անուսինը՝ մ. թ. ա. 825-810 թթ. միջակայքում: Այս գահանվան առաջին բաղադրիչի հիմքում արքայական արևի աստծու **Շամաշ** անունն է, իսկ երկրորդ բաղադրիչը նույնական է անարոպային աստծու **Ադադ** անվան հետ:

46 **Սեբեոսի եպիսկոպոսի** Պատմություն, Բաղդատությունեամբ ձեռագրաց հանդերձ առաջաբանի եւ ծանոթագրությունեամբք ի ձեռն **Ստ. Մալխասեանց**, Եր., Արմֆանի հրատ., 1939, գլ. Ա, էջ 5:

47 **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հատ. I, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1978, էջ 79, ծան. 1:

չո՛ւ Հայկը չուզեց մնալ Հարքում, իսկ իր Արամանյակ որդուն հրամայեց իր մահից հետո հաստատվել այնտեղ: Ի՞նչն էր Հայկին կապում Հարքի հետ: Չէ՞ որ հաղթանակը նա այնտեղ չէր տարել, այլ Հայոց ձորում: Այս հարցում հստակություն մտցնել հնարավոր է միայն այն դեպքում, եթե նկատի առնենք, որ մինչև Հայկը Հայկազունները Հարքում տիրույթ են ունեցել, իսկ Հարքի և Արևմտյան Տիգրիսի ավազանի՝ իրարից ունեցած հեռավորությունը նկատի առնելով՝ կարելի է ենթադրել, որ այն բուն Հայկազանց ցեղի կողմից բնակեցված տիրույթ չի եղել: Մեր կարծիքով՝ այն եղել է Հայկի մոր օժիտը, որը, ըստ օրինի, համարվել է նրա հոր սեփականությունը⁴⁸:

Հայկի՝ Հարքը հենակետ դարձնելու, այսինքն՝ Հարքում տիրույթ ունենալու տեսանկյունից ուշագրավ է նախ և առաջ ուրարտական դարաշրջանին վերաբերող հետևյալ փաստը: Մ. թ. ա. 820 թ. Ասորեստանի Շամշի-Ադադ թագավորը, ասպատակելով Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանամերձ շրջանները, ի թիվս այլոց, հիշատակում է նաև, որ գրավել է Ուշայինային/Իշպուինիին պատկանած 11 ամրոցները և 200 բնակավայրերը: Ինչպես Ն. Ադոնցն է ցույց տվել, Ուրարտուի թագավորի հիշյալ ամրոցներն ու բնակավայրերը «իրականում գտնվել են Մուսասիրի և ոչ թե Ուրարտուի տարածքում»⁴⁹: Իսկ դա կարող էր լինել մի դեպքում, եթե դրանք Իշպուինիի սեփականությունն էին դարձել շնորհիվ այն բանի, որ նրա մուծած իրրիցի կնոջ օժիտն էին: Իշպուինիի կնոջ՝ հայոց թագուհու մու-

48 Հնագույն Հարք գավառի ոչ Հայկազուն տերերի մասին գրավոր տեղեկություններ չկան: Ավանդությունները պատմում են Հարքում Լաթարը նստավայր ունեցած Պոռշ հսկա իշխանի (թագավորի) մասին: Նա երեք (կամ յոթ) որդի է ունեցել և մի **Հավլունի** կոչված կայծակե թուր: Նրա անունը դժվար թե կապ ունենա բարբառային **պոռշ** «շրթունք» բառի հետ: Մեր կարծիքով՝ մեր **Պոռշ**-ն իր ***Պուռոշ** նախաձևով զուգահեռն է հին հնդկական Púrsa անվան, որի կրողը հին հնդկական առասպելաբանության մեջ համարվում էր առաջին մարդը և առաջին գոհաբերվածը (տե՛ս **Топоров В.**, Пурюша, МНМ, т. II, М., изд. Советская энциклопедия, 1988, էջ 351): Վերջինիս գոհաբերությունն է հիշեցնում թաղման ժամանակ Պոռշի մարմինը երեք մասի բաժանելու ավանդազրույցը: Ընդ որում, նկատելի են գլուխ-երկինք, մարմին-երկիր, ոտքեր-բնդերք համադրումները: Պոռշի մասին ավելի մանրամասն տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., հատ. 1, էջ 394-395, էջ 571-572, ծանոթ., **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 288-290, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. X, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 395-396:

49 **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն: Ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 92-93:

ծածիրցի լինելով⁵⁰ են մասամբ պայմանավորված մուծածիրյան Խալ-դի աստծու պաշտամունքի ներմուծումը և խալդիապաշտ քրմերի մուտքը Ուրարտու:

Եվս մեկ օրինակ, արդեն Երվանդունյաց դարաշրջանից: Վաղարշապատին նախորդած բնակավայրի հիմնման առնչությամբ Մովսես Խորենացին բերում է Վարդգես Մանուկի առասպել-ավանդագրույցը, որի հերոսի առասպելաբանական նախատիպը ջրամանուկ/ձկնամարդ էր, իսկ իրական նախատիպը փեսան էր Արմավիրում նստած Երվանդ թագավորի: Ըստ Մովսես Խորենացու՝ «Այս Երուանդ՝ առաջինն է, Սակաուկեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս», այսինքն՝ «զաւանս Վարդգէսի»⁵¹: Եթե պատմական Վարդգեսն Արարատյան դաշտում, որն արքունի ոստան էր, բնակավայր է հիմնել և այն իր անունով կոչել, ապա դա կարող էր լինել միայն մի դեպքում, եթե այդ տարածքը նրա սեփականությունն էր դարձել՝ լինելով իր արքայադուստր կնոջ օժիտը:

Հայկի մոր՝ ամուսնու սեփականությունը դարձած օժիտը բնականաբար ժառանգելու էր և ժառանգել էր Հայկը: Սրանով հասկանալի է դառնում նաև այն հանգամանքը, թե ինչու էր Հայկը, չհանդիպելով որևէ խոչընդոտի, Հարքը դարձրել հակաաքքադական դիմադրության շարժման հենակետ և այնտեղ հիմնել Հայկաշենը: Ավելին՝ Հարքում նրան օժանդակել էին (նախ և առաջ Վանա լճով Հայոց ձոր հասնելու համար նավակներ և լաստեր տրամադրելու հարցում) որպես իրենց ձանաչած տիրոջ: Անշուշտ, դրանք լինելու էին Վանա լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջաններն ընդգրկած Բզնունիքի բնակիչները: Որ հնագույն Բզնունիքը Հարքի մասն է համարվել, կարելի է կռահել Հայկի մասին ավանդագրույցից, որից Մար Աբասի միջնորդությամբ օգտված Մովսես Խորենացին գրում է. «Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել **ի Հարք**, և թա-

50 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները Հին Հայաստանում, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ հրատ., 2006, էջ 198-200:

51 **Մովսիսի Խորենացույ** պատմություն Հայոց, Բ, կե: Վարդգես Մանուկի՝ առասպելաբանական նախատիպից բացի պատմական նախատիպ ունենալու մասին տե՛ս **Պետրոսյան Ս.**, Պատմականն ու առասպելաբանականը Վարդգես Մանուկի ավանդագրույցում, ՀՀ ԳԱԱ ՇՀԸ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. XV, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 27-31:

ղել ի բարձրաանդակ տեղուք, ի տեսիլ կանանց և որդուց իւրոց»⁵²: Իսկ այդ տեղը ժողովուրդը ցույց էր տալիս Նեմրութ լեռան (Տարունի և Բզնունիքի միջև) լանջին: Այս առնչությամբ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Այս Նեբրովթ (իմա՝ Նեմրութ – Ս. Պ.) լեռը յուր ճակատեն կախած ունի Բելա դիակը»⁵³:

Հայկը նախընտրել է իր վախճանը դիմավորել ոչ թե Բզնունիքում, այլ իր հայրենի ուստանում, որտեղ և թաղվել է: Դրա արևմտյան մասում՝ Մեծ Հայքի Անգեղտուն գավառում էր գտնվում Անգեղ անառիկ բերդը⁵⁴: Այստեղ է հավանաբար եղել Հայկի գերեզմանը, որովհետև անառիկ Անգեղում ոչ միայն պետական գանձարան կար, այլև արքայական հանգստարան: Սրանց վերաբերյալ IV դ. կեսերի հայ-պարսկական պատերազմի առնչությամբ Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ Մերուժան Արծրունու գլխավորությամբ Տիգրանակերտը գրաված և ավերած պարսից զորքերը «գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ գամուր բերդան, որ յԱնգեղ տանն գաւառին, զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց: Բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ: Չուան պահ արկին զբերդան. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղույն, թողուին և գնային»⁵⁵:

«Հայոց թագաւորացն գերեզմանք»-ը ամփոփած Անգեղ բերդը հետագայի Ազիլ/Ակիլ բերդավանն էր: Մեզ հետաքրքրած վայրի նկարագրությունը բարեբախտաբար տվել է Գ. Սրվանձտյանցը: Նա գրում է. «Ակիլ ավան: Ապառաժներու մեջ շինված ամուր բերդավան մը, որո քարափոր բերդն, բուրգեր և քարայրե գերեզմանները... փորված են հատկապես, և կը ցուցնեն իրենց դիրքով թե՛ երևելի արանց շիրիմներ եղած են, այժմ թափուր. երկու սևացյալ քարայրեր իրենց փորածո ձևերով կարծել կուտան թե մեհենի տեղ են եղած, և այս անմատույց վայրը ոչ միայն շիրմաց, այլև գանձուց և կարասյաց դարան են»⁵⁶: Գ. Սրվանձտյանցի միտքը կարծես շարունակելով՝ Գ. Սարգսյա-

52 Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Ա, Ժա:

53 Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., հատ. I, էջ 34:

54 Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 35 և քարտեզը:

55 Փաստոսի Բիզանդացու պատմություն Հայոց, Բնագիրը՝ Բ. Պատկանյանի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1987, դպր. Դ, գլ. իղ:

56 Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., հատ. II, էջ 416:

ընդ Փավստոս Բուզանդի վկայությունների առնչությամբ գրում է. «... Նա Անիում թաղված Արշակունիներին անվանում է «Հայոց առաջին թագավորներ» (քանի որ այնտեղ թաղված են եղել իսկապես առաջին հայ Արշակունիները), իսկ Անգեղի (տպագրում վրիպակով՝ Անիի) Արշակունիներին՝ սուկ «նախնիներ»: Այս տարբերությունը առիթ է տալիս մտածելու, որ Անգեղում թաղված պետք է լինեին Արտաշիայան դինաստիայի թագավորները...»⁵⁷: Հավելենք սրանց նախորդած Հայկազանց-Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչներին (նաև Ծոփքի Երվանդունի թագավորներին), որոնցից էին սերում Անգեղտան իշխանները:

Մար Աբասին արած հղումով Մովսես Խորենացին գրում է. «Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն պատմագիր ի Պասքամայ ումեմնէ՝ ի Հայկայ թոռնէ լինել»⁵⁸: Հակառակ գոյություն ունեցող կարծիքի՝ ոչ թե Բագրատունիների, այլ Անգեղտան իշխանների տոհմաբանությունն է ներկայացնում Անանունը, երբ նրանց նախնին համարում է Արամենակին՝ Հայկի որդուն: Նա գրում է. «Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամենակայ, այր զաւրաւոր և կորովի աղեղամբ. ապա Արմոզ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւագ: Սա ծնաւ զԲագամ և զԲագարատ. և Բագարատ ծնաւ զԲիրատ, և Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»⁵⁹: Բնականաբար, գավառի բնիկ Անգեղտան իշխանների և նրանց նախնիների շիրիմները գտնվելու էին Անգեղտուն գավառում՝ հավանաբար նույն Անգեղ բերդի գերեզմանոցում: Այդտեղ պետք է լինեին նաև նրանց նախնի **Պասքամի** և սրա պապ Հայկի շիրիմները:

57 Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 64:

58 Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Ա, իգ:

59 Մեբեղոսի եպիսկոպոսի Պատմություն, գլ. Ա, էջ 6-7: Լ. Պետրոսյանի կարծիքով՝ Տիգրան Մեծի թագադրման վայրում նրանից առաջ թագադրվել են ինչպես Հայկազանց-Երվանդունիներից սերած, այնպես էլ Արմե-Շուբրիայի թագավորները: Ընդ որում, նույնպիսի շարունակական ավանդույթ եղել է նաև նրանց թաղման ժամանակ՝ պայմանավորված «արևելք-արևմուտք» առասպելաբանական հակադրմամբ. Տիգրանակերտն արևելքում էր՝ արևածագի վայրում, իսկ Անգեղ բերդը՝ արևմուտքում արևմուտի վայրում (տե՛ս Պետրոսյան Լ., Երվանդունի թագավորների թագադրման հնարավոր վայրի մասին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. 2 (23), Գյումրի, 2020, էջ 89-91):

4. Արմի երկրի՝ Հայկին ժամանակակից տոհմերի և տոհմապետերի մասին

Արմի երկրի բնակիչ Հայկի ցեղի՝ երկու տոհմից բաղկացած լինելու իրողությունն իր արտացոլումն է գտել Մովսես Խորենացուն հասած այն տեղեկության մեջ, թե Բելի (սրա պատմական նախատիպը Սարգոն Աքքադացին էր)⁶⁰ դեմ ճակատամարտ տալուց առաջ Հայկը «կարգէ զԱրամանեակն երկու եղբարքք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յադեղն և ի սուսեր, և ինքն առաջի»⁶¹: Պարզ է, որ Հայկազանց ցեղապետ-արքա Հայկի աշխարհագորի աջ թևը հայրական տոհմի (Հայկի, Արամանյակի) մարտիկներն էին զբաղեցրել, իսկ ձախ թևը՝ մայրական տոհմի (Կադմոսի): Զորքի այսպիսի բաժանումն արտացոլում է Հայկի գլխավորած ցեղի երկմիասնական կառուցվածքի պատկերը՝ աջ տոհմ//արական տոհմ՝ «քոչի» տոհմ, և ձախ տոհմ//իգական տոհմ՝ «օձի» տոհմ:

Հայկի ցեղի երբեմնի երկմիասնական կառուցվածքի մասին հիշողությունը պահպանվել է մինչև 19-րդ դարի վերջերը տարեցտարի կրկնված մի «խաղում»: Գ. Սրվանձտյանցը, որը, վանեցի լինելով, ականատես է եղել դրան, գրում է. «Վանի մեջ մեկ թաղ կա բնակչաց, բերդի պարսպեն դուրս, որ մինչև ցայսօր **Հայկավանք** կը կոչվի», ապա՝ ավելացնում. «Վարդավառի օրը բնակիչք թաղ թաղ բանակ կը կազմեն և իրարու դեմ պարսետով և փայտե նետով ու աղեղով կռիվի կ'ելլեն իբրև խաղ: Այս ևս կարելի է **Հայկավանից** բնակչաց հին ավանդություն համարել իբրև հիշատակ **պատերազմին Հայկա ընդ Բելա**»⁶²:

Պարզ է, որ «խաղ» կոչվածը հազարամյակների խորքից եկած՝ երկու տոհմերի ծիսական պայքարի վերհուշն է: Անկասկած, Հայկավանքի բնակիչներն իրենց համարել են սերունդները Հայկի, հետևաբար նաև արական «քոչի» տոհմի, իսկ բերդի բնակիչները համարվել են իգական «օձի» տոհմի սերունդներ: Վերջինիս առթիվ հիշենք, որ

60 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Վիպական Հայկը, պատմական Հայկը և նրա ժառանգությունը, «ՎԷՄ», 2022, N 1, էջ 27–30, 33–34:

61 **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Ա, Ժա:

62 **Սրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., հատ. I, էջ 83:

մեր պատմիչները Վանի հիմնադիր էին համարում Ատրեստանի թագուհի Շամիրամին և քաղաքը կոչում նաև «քաղաք Շամիրամայ»⁶³: Այսպիսի ծիսական «խաղերի» խմբավորումներից յուրաքանչյուրի մասնակիցն ու ականատեսը, բնականաբար, բացականչություններով խրախուսել են իրենց տոհմի «մարտիկներին»: Այդուհանդերձ, անգամ վիրավորներ լինելու դեպքում չեն խախտվել տոհմերի միջև եղած խնամիա-բարեկամական փոխհարաբերությունները: Այդ են վկայում «այծ» պատասխանն ակնկալող «Սարեն գուգա, ձորեն գուգա, / Միրսավոր (մորուքավոր) փեսեն գուգա» և նման բնույթի ժողովրդական այն հանելուկները, որոնցում իրական փեսայի փոխարեն նկարագրվում է նրա տոհմի տոտեն արու այծը՝ քոշը⁶⁴:

Հայա/Հայկից բացի, որը միասնական Արմիի ցեղապետ-արքան էր, Էրլայի արձանագրություններում, ինչպես վերը նշվեց, հիշատակվում են ևս երկու բարձրաստիճան արմիցիներ: Նրանց բարձրաստիճան լինելը երևում է պետական գանձարանի հաշվին Էրլայում նրանց մատուցված նվերներից: Դրանց գործարքը գրանցվել է հետևյալ կերպ. «1 կուսիտ գործվածք Մուրիին՝ Արմիից» և «1 կուսիտ գործվածք, 1 ակտում գործվածք, 1 բարձրորակ գույնզգույն հագուստ Մալումին՝ Արմիից»⁶⁵: Մեր կարծիքով՝ այս բարձրաստիճան արմիցիները եղել են Հայկի ցեղի՝ Հայկազանց տոհմապետերը՝ Հայկի տեղակալները, որոնք, ներկայացուցիչները լինելով «քոշի» (Մալումը) և «օձի» (Մուրին) տոհմերի, Էրլա էին ժամանել հակաաքքադական դաշինք կնքելու նպատակով⁶⁶: Չի բացառվում, որ դաշինքն ունեցել է տնտե-

63 Տե՛ս **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Բ, ը: Հիշարժան է, որ, ըստ Է. Ֆոռերի, մ. թ. ա. XIV դ. հայտնի Հայասա-Ազի ցեղամիության երկու մասերը գոյություն են ունեցել առանձին-առանձին, ապա միավորվել են (տե՛ս **Forrer E.**, նշվ. աշխ., էջ 4, ծան.): Ըստ երևույթին, միավորումից հետո ստեղծված նոր միության երկու՝ *Hajša* (հայրական) և *Azzi* (մայրական) մասերի տոհմիկ ցեղապետերը քեռի-գարմիկ հաջորդականությամբ փոխնիփոխ զբաղեցրել են միութենական ցեղապետ-արքայի պաշտոնը, ուստի միությունը մերթ **Հայասա** է կոչվել, մերթ՝ **Ազի**:

64 Տե՛ս **Հարությունյան Ս.**, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., ՀՄՄԻ ԳԱ հրատ., 1965, էջ 57-58:

65 **Иванов В.**, указ. соч., с. 452.

66 Էրլայագետ Պ. Գարեղին հնարավոր էր համարում Նարամ-Մուենի արձանագրությունների Ar-ma-namki ù Eb-laki բառակապակցության համադրումը Էրլայական Eb-laki wa Ar-miki կապակցության հետ: Էրլայի կործանումից հետո Arman(-um)-ի դեմ Նարամ-Մուենի ձեռնարկած արշավանքը խոսում է այն մասին, որ վերջինս իրոք եղել է Էրլայի դաշնակիցը և որպես այդպիսին նույնանում է Armi-ի հետ (հմմտ. **Гарелии П.**, նշվ. աշխ., էջ 285): Էրլայի և Armi-ի դաշինքը կարող էր ձևավորված

ասկան կողմ ևս: Այդ մասին չի՞ խոսում արդյոք այն փաստը, որ Մուրին ընդամենը մեկ տեսակի նվեր էր ստացել պետական գանձարանի հաշվին, իսկ Մալումը՝ երեք: Վերջինը թերևս հանքերով հարուստ Հյուսիսային Արմիի ներկայացուցիչն էր:

Անդրադառնանք արմիցի Մալումի (Malum) և Մուրիի (Muri) անուններին: Վ. Նիկոնովը նշում էր, որ անձնանունները «սոցիալական են բոլորը և միշտ», որ «անձնանունը նշանաբան է՝ նշելու այն կրողի պատկանելությունը այս կամ այն հասարակական շրջապատին»⁶⁷: Malum < Mal-um անունը կազմված է mal- հիմքից և դրան հավելված արքադերենի ուղղական հոլովի -um վերջավորությունից (նույնպիսի հավելում կա էբրայի թագավորի Ebrium անվան և Armanum երկրանվան մեջ): Malum անվան mal- արմատը նույնական է հայերեն **մաղ** «քոշ, նոխազ» բառի հետ (ըստ Գր. Մագիստրոսի՝ «Խոյն, գոնչակ, վիդոն, դուար, **մալ**. այսոքիկ արականք ի վերայ հօտից ասացեալք են նշանակութեամբք»)⁶⁸: Տոտեմիզմից եկած կենդանիների անունների՝ մարդկանց վերագրման առնչությամբ հմնտ. **Այծեմնիկ, Արծվիկ, Աղունիկ, Գառնիկ, Եզնիկ, Եղնար, Լորիկ, Կաքավ, Կորյուն** անձնանունները: Գր. Մագիստրոսի հիշատակած **մաղ** բառը տարբեր է «տավար, խոշոր եղջերավոր անասուն» նշանակող **մալ** բառից, որն արաբերենից կատարված փոխառություն է: Բնիկ հայերեն **մաղ**-ը ծագում է հ.-ե. *mel-/*ml- արմատից, որից ունենք նաև **մալել** «մանրել, փշրել» բայը և **մեղմ** (< *մեղ-մ), **մեղկ** (< *մեղ-կ) ածականները⁶⁹: Կենդանիներին տրված անունների մեջ կան այնպիսիները, որոնք խոշորը, նույնիսկ շատ խոշորն է կրում, բայց իրականում ձագերի անուններն են եղել. Հմնտ. **յաւանակ** «անասունի ձագ, էջի ձագ» և **աւանակ** «էջ, մեծ էջ»⁷⁰, իսկ **ցուլ** բառի արմատակիցն է հուն. σκύλαξ «շնիկ»-ը⁷¹:

լինել դեռևս Հայկի կենդանության ժամանակ, երբ Հայկազանց ցեղամիությունն իր վերելքի շրջանում էր և միաձույլ էր:

67 **Никонов В.**, Личное имя-социальный знак, «Глазами этнографов», М., изд. «Наука», 1982, с. 38, 63.

68 Տե՛ս ՀԲԲ, հատ. III, Եր., ՀՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 243, ՀԱԲ, հատ. I, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1971, էջ 579:

69 Տե՛ս ՀԱԲ, հատ. III, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1977, էջ 104:

70 Տե՛ս նույն տեղում, էջ 390:

71 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, էջ 744:

«եղջերավոր»/«լեռ» առասպելաբանական գուգորդումով է ստեղծվել Mallānu լեռնանունը (նաև երկրանուն և քաղաքանուն էր)՝ հայտնի Անգեղտան տարածքից⁷²: Սրանում առկա են mal-/մաղ արմատը և -ան տեղանվանակերտ վերջածանցը: Նույն արմատն է նաև Գեղամա լեռների **Գեղմաղան** գագաթի (3319 մ)⁷³ անվան մեջ: **Գեղմաղ-ան** լեռնանվան մեջ առկա են նաև -ան տեղանվանակերտ վերջածանցը և *գեղ «մեծ» արմատը (վերջինի համար հմնտ. **արդն** «նիզակ» և **գեղարդն** «մեծ նիզակ») ⁷⁴:

Արմիցի Մալումն իր անվամբ առնչվում է թե՛ Հայա/Հայկի ուստանին, թե՛ նրա քոչի տոտեմին և թե՛ նրա ամպրոպային պաշտամունքին: Հիշենք «կայծակ» և «կայծքար» պատասխաններով «Ինքը՝ էծ, մեջքը՝ պեծ» հանելուկը⁷⁵: Անգեղտանը (հետագայի Արկնո/Արդնո գավառում) ամպրոպի աստծո երբեմնի պաշտամունքի գոյության մասին կարելի է դատել Գ. Սրվանձոյանցի ուղեգրության հաղորդումների միջոցով: Նա գրում է. «Հետևյալ օրվան ուղին նույնքան դժվարին է՝ լեռնոտ և քարոտ, առատ անձրև ալ կտեղա... մտանք բարձրահայաց Ս. Աստվածածնի վանքը, որ շինված է ապառաժ ահագին բարձրության մը վրա, որ կը կոչվի Արկնո բերդ, և արդարև բերդին պարսպի բեկորներ և ողջ մնացած կան»⁷⁶: Ապա. «Ս. Տաճարին մեջը **ճրագ մը տեսանք վրան արծաթ**, մեջը հողե, զոր կը վառեն **կայծակի օրերը** և կանվանեն **«Արնե ճրագ, կայծակի ճրագ»**, վանքն իր դիրքով հաճախ ենթակա է **կայծակի**: Այդ ճրագի արծաթին վրա գրված է «Յիշատակ է ճրագս արնէ ի տաճարն Բարձրահայեաց Ս. Աստուածածնայ... ի յապահովութիւն տեղոյս միաբանիցն **ի կայծական, ի Ռ.Մ.Զ»**»⁷⁷: Ընդգծված տողերը վերաբերում են Անգեղտան Բարձրահայաց Ս. Աստվածածին վանքի տեղում հնում ամպրոպի

72 Տե՛ս АВИИУ, N 23, **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 74:

73 Տե՛ս **Ասլանյան Ա., Գրգեարյան Հ.**, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 50: Սա հնում **Գեղ** էլ է կոչվել (տե՛ս **Սեբեոսի եպիսկոպոսի** Պատմություն, Ա, էջ 7), եթե միայն **Գեղ** «մեծ» անունը ներկայիս **Աժդահակ** կոչված ավելի բարձր (3597 մ) լեռանը չի վերաբերել (**Աժդահակ** < բրբ. **աժդահա**՝ «մեծ, հսկա, վիթխարի»):

74 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-V դդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1976, N 1, էջ 194-195:

75 Տե՛ս **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 20:

76 **Սրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., հատ. II, էջ 411:

77 Նույն տեղում, էջ 413:

աստծու պաշտամունքին, իսկ տեղանքի նկարագրությունը և բերդի անունը՝ **Արկնո** բերդ, խոսում են նրա՝ նաև զինվորական հենակետ լինելու մասին:

Ի դեպ, պատահական չէ, որ Ատորեստանի Աշուրնասիրապալ II թագավորը (մ. թ. ա. 883-859 թթ.) Arqania լեռան վրա գրավել էր Mallānu քաղաքը (որը, ինչպես նշվեց, հիշատակված է նաև որպես լեռ և երկիր⁷⁸): Այս լեռնանունն են այժմ կրում Արդանա-Մադեն//Էրգանի բնակավայրը և նրա մոտ գտնվող **Էրգանի** լեռնաշղթան: Միևնույն արմատից են ծագում նաև Գ. Սրվանձոյանցի հիշատակած **Արկնոյ/Արդնոյ** գավառի և նրա կենտրոն **Արկնի/Արդնի** (> թրք. **Էրգանի**) բնակավայրի անվանումները: Arq-ān-ia տեղանվան մեջ առկա են *arq-/*ark- արմատը և -ān, -ia վերջածանցները, որոնցից վերջինները հայերենում նաև տեղանվանակերտ մասնիկներ են: Տեղանվան արմատը հայերենում առկա է **հարկ** և **արկ** (**զ**- սաստկականով՝ **զարկ**) տարբերակներով⁷⁹, որոնցից երկրորդն է տեղանվան հիմքում: Սրանից ունենք **արկանել** «լցնել, ածել» և **արկնել** «տեղալ» (օր.՝ **անձրև է կարկնել**) բառերը⁸⁰:

Այս տարածքում Zamba անունով երկիր է հիշատակում նույն Աշուրնասիրապալ II-ը: Ըստ երևույթին, թե՛ Arqania տեղանունը, թե՛ Zamba-ն կիրառվել են որպես հին Անգեղտան տարբեր անվանումներ (կամ տարբեր մասերի անուններ): Zamba երկրանունը բացահայտ հայերեն ստուգաբանություն ունի. բաղկացած է **զ**- սաստկական նախածանցից և ***ամբ** արմատից: Նախածանցի համար հմմտ. **զարկ** < **զ-հարկ**, **Ջատիկ** < **զ-հատիկ**, **զեղուլ** < **զ-հեղուլ**, **զեռալ** < **զ-եռալ** և այլն, իսկ ***ամբ** արմատը նույնն է հայ. **ամպ** բառի հետ (ինչպես Հ. Աճառյանն է գրում, «հնագույն ուղղագույն ձևը առաջինն է»⁸¹): Այս հնագույն-ուղղագույն ձևն առկա է ինչպես **Ջամբա** երկրանվան մեջ, այնպես էլ **ամբուզամբ** և **զամբ** բառերում: **Ամբուզամբ**//**ամպուզամպ** նշանակում է «ամպոտ օր, փոփոխական եղանակ»⁸², իսկ

78 Տե՛ս АВИИУ, N 23, **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 74:

79 Տե՛ս ՀԱԲ, հատ. III, էջ 53-54:

80 Տե՛ս ՀԲԲ, հատ. I, Եր., ՀՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 271:

81 ՀԱԲ, հատ. I, էջ 163:

82 Տե՛ս ՀԲԲ, հատ. II, Եր., ՀՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 6:

զամբ՝ «ձորերում կամ լեռների վրա դիզված ձյուն, զամպ»⁸³: Մեր կարծիքով՝ **ամպ**, **ամբուզամբ**, **զամբ** բառերի արմատակիցն է **ամբուռք** (< ամբ-ուռ-ք) «մրրիկ, փոթորիկ» բառը⁸⁴: Մեր ժողովրդի կողմից սիրված սրբի՝ ս. Սարգսի անունն էին կրում Արկնի բնակավայրի երկու եկեղեցիները⁸⁵, իսկ ժողովուրդը նրան էր վերագրում թե՛ հողմի, թե՛ ամպրոպի աստվածներին բնորոշ գծեր:

Ինչպես արդեն նշվեց, Արմի երկրից դաշինք կնքելու նպատակով էբլա ժամանած և այնտեղ թանկարժեք նվերների արժանացած երկրորդ անձը Մուրին էր⁸⁶: Muri անձնանվան *mur-/*mor- արմատը ևս հնդեվրոպական ծագում ունի: Դրա արմատակիցն է **մոր** հատապտղի անվանումը, որից՝ իր թփի **մորենի** (< մոր-ենի) անվանումը: Մի ժամանակ կարծում էին, թե հնդեվրոպական նախալեզվում գոյություն են ունեցել *mer- «սևացնել» և *mer- «առկայծել» (վերին ձայնդարձերով) տարբեր արմատներ, բայց հետո դրանք համարվեցին միևնույն արմատը⁸⁷: Հ.-ե. *mor-ը՝ այս արմատի միջին ձայնդարձը, հիմքն է մեր սեպագրային Muri, Murini և Murinu անունների: Muri-ի -i վերջածանցը ծագում է հ.-ե. -iio- վերջածանցի կարճ ձևից. հմնտ. նույնպես սեպագրությամբ վկայված մեր Dadi, Kaki և Seni անձնանունները: Murini անվան մեջ առկա -in վերջածանցը նույնական է հ.-ե. -eno-ից ծագած հայերեն **-ին** վերջածանցի հետ, իսկ արմատի հետ՝ *mor-in-, այն տեսնում ենք ոչ միայն Աբիլիանի(խի)//Աբեղեանք երկրի (հետագա Բասենը) ցեղապետի Murini⁸⁸, այլև Վելիքունի//Գեղա(ր)քունի երկրի ցեղապետի Murinu⁸⁹ անվան մեջ: Հնդեվրոպական

83 Տե՛ս նույն տեղում: Հմնտ. նաև Կարնո բարբառի Գյունրու խոսվածքի **ամբախ-զամբախ խոսել** (այսինքն՝ «անհամ խոսել») դարձվածքը, որում **ամբախ** նշանակում է «ամպաջուր», իսկ **զամբախ**՝ «զամբաջուր»: Մրանք իրականում էլ անհամ ջրեր են:

84 Տե՛ս ՀԲԲ, հատ. I, էջ 59:

85 Տե՛ս **Սրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., հատ. II, էջ 415:

86 Տե՛ս **Иванов В.**, նշվ. աշխ., էջ 365-368:

87 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 61, ծան. 43:

88 Տե՛ս **Аргютонян Н.**, նշվ. աշխ., էջ 254:

89 Տե՛ս նույն տեղում, էջ 242: Հ.-ե. *mer-/*mor- արմատի ստորին ձայնդարձից ունենք **ամար** (**ա-** նախաձայնով) ձկնանունը, որի բրբ. **ամառ** ձևը հատկացվել է «գեղարքունու տեսակներից մեկին» (տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 147, ՀՍԲ, էջ 43):

ծագման նույն վերջածանցով են կազմված նաև հայերեն **ամուսին, դարբին, դեղին, լուսին** և այլ բառեր⁹⁰:

Հ.-ե. *mer- «առկայծել» արմատի հետագա զարգացումը հանգեցրել է նրան «գույնզգույն, խայտաբղետ» իմաստների վերագրմանը: Հ.-ե. *mer- արմատից են ծագում նաև ազգակից լեզուների հետևյալ բառերը՝ հայերեն **մոր/մորի** հատապտղի (սա նախ սպիտակ է, հետո կարմրում է, ապա՝ աստիճանաբար սևանում) անվանումը, ենթադրաբար նաև կարմրախայտ ձկան և օձի ինչ-որ տեսակի անվանումները, հունարեն μύριος ձկնանունը և նրան առնչվող Μύρινα/Μύρινη ծովափնյա քաղաքանունը, որոնք կարող էին զուտ «ձկնային» բնույթի լինել՝ ի տարբերություն «օձային» բնույթի Μύρινα ամազոնուհու⁹¹ անվան: Եթե տոտեմական ծագում ունեցող բերված հայկական անուններից Վելիքունիի ցեղապետի Murinu անունը կարելի է «կարմրախայտ, գեղարքունի, իշխան» ձկնատեսակին առնչել, ապա Murini-ն և Muri-ն կարելի է առնչել խայտաբղետ խորխով օձի ինչ-որ տեսակի: Եթե առաջին դեպքում դա կարելի է հիմնավորել Գեղարքունիքում կարմրախայտ ձկան և ձկնամարդու պաշտամունքի գոյությամբ⁹², ապա երկրորդի մասին կարող է վկայել Բասենում մինչև 19-րդ դարի սկիզբը գոյություն ունեցած օձի և օձամանուկի պաշտամունքը: Բասենում, ականատես բասենցու վկայությամբ, «Շատերի տներում օձ կար: Սրանք սովորել էին մարդկանց և չէին խայթում: Բասենում օձը համարվում էր տան դովլաթ (բախտ, հարստություն) և դրա համար էլ տնային օձերին ձեռք չէին տալիս»⁹³:

Նախկին «Կաղմեայ տունը»//Կաղմուխին լայն առումով ներառում էր հետագայում **Միջագետք Հայոց** կոչված տարածքը: Սրա վերաբերյալ Արտաշատի հայ-հռոմեական հաշտության պայմանագրի առթիվ Ստրաբոնը գրում է, որ հռոմեական զորավար «Պոմպեոսը

90 Տե՛ս «Древнегреческо-русский словарь», т. II, М., Гос. изд. иностранных и национальных словарей, 1958, էջ 1115:

91 Տե՛ս նույն տեղում: Ձկան և օձի՝ նույնական անուններ կրելու առնչությամբ հիշենք, որ թե՛ ձուկը և թե՛ օձը համարվում էին ստորին/ընդերքային աշխարհի ներկայացուցիչներ: Ըստ այդմ **օձաձուկ** բարդ բառը ոչ միայն «ձկան տեսակ» է նշանակում, այլև «օձի տեսակ» (տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2010, էջ 292):

92 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Գեղամի, Միսակի և Վեդուրի-Էթիունի ցեղախմբի պաշտամունքի մասին, «Հայկազունիներ», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 148-152:

93 **Հակոբյան Գ.**, Ներքին Բասենի ազգագրությունը և բնահյուսությունը, Եր., «Հաստատան» հրատ., 1974, էջ 272-273:

նրա մեծագույն և լավագույն մասը Տիգրանին պահեց: Երկիրը արտաավետ և այնպես բարերեր է, որ սնուցանում է նաև մշտադալար ծառեր և համեմունք՝ ինչպես ամոնոն. կան նաև առյուծներ. գտնվում է նաև նավթ և **գանգեսյան կոչված քարը, որ հալածում է օձերին** (ընդգծումը մերն է – Ս. Պ.)»⁹⁴: Ստրաբոնի վերջին խոսքերից պարզվում է, որ, ըստ երևույթին, Տարոնի, Բասենի և Հայաստանի այլ վայրերի նման «Կադմեայ տանը» ևս օձերն ազատ ելունուտ են ունեցել անգամ բնակելի տներում, ուստի գանգեսյան քարի վերաբերյալ հնդկական հավատալիքները վերագրել են նաև օձապաշտ «Կադմեայ տանը», որն Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո ներառվել էր Սելևկյան թագավորության կազմում: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ այստեղ են գտնվել Միջագետքի Հասունյան և Հալաֆյան հողագործական մշակույթների (մ. թ. ա. VII–V հազարամյակներ)⁹⁵ և հացահատիկի մշակման⁹⁶ առաջին օջախները: Իսկ հայտնի է, որ օձը եղել է մարդու առաջին դաշնակիցը հացահատիկի գող մկների և դրանց նմանների դեմ. որտեղ կան այդպիսիք, կան նաև օձեր:

Հայկական ավանդություններից մեկում հայի կյանքը փրկած օձը **հայ** է կոչվում⁹⁷: Սրա կապակցությամբ Մ. Աբեղյանն իր հարցադրումն է անում. «Օձի մասին այս ավանդության մեջ արդյոք թաքնված չէ՞ տոտեմիզմի մի մթագնված վերապրուկ», ապա տալիս է օձապաշտության վերաբերյալ իր ամփոփիչ եզրակացությունը. «Ո՛չ թունավոր օձերի «հայ» անվանումը, որ մերթ իբրև օձ է հանդես գալիս, մերթ իբրև մարդ, և գավառի նախնիների նման պաշտպանում է գավառն ու բոլոր հայերին, ծագել է, անշուշտ, այն հանգամանքից, որ օձերն հնում որպես նախնիներ են ընկալվել»⁹⁸: Ճիշտ այդպիսին էին ընկալվել հայկական և հունական Կադմոսների նախատիպերը⁹⁹,

94 **Strabo**, XVI, I, 24 (**Ստրաբոն**, էջ 91).

95 Տե՛ս **Гамкрелидзе Т., Иванов В.**, նշվ. աշխ., հատ. II, էջ 656–658, 891–893: Հմմտ. **Եսայան Ս.**, Հայաստանի հնագիտություն, պրակ I: Քարի դար–Ուշ բրոնզի դար, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1992, էջ 79:

96 Տե՛ս **Меллаарт Дж.**, Древнейшие цивилизации Ближнего Востока, М., изд. «Наука», 1982, էջ 65–66:

97 Տե՛ս **Ղանալանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 128:

98 **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. VII, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 64:

99 **Կադմոս** անվան **Կադմ**–ի հինքի հնդեվրոպական–հայկական ստուգաբանությունը (< հ.–ե. *ǵʷədʰ-m- «գարշելի, պիղծ». տե՛ս **Պետրոսյան Ս.**, Արամանյակի որդիները և

որոնց հեքիաթային հետնորդներն են լինելու հայ ժողովրդական հեքիաթների օձամանուկները¹⁰⁰: Այդպիսին էին ընկալվել թե՛ Կադմոսը և թե՛ նրա «օձային»-իգական տոհմի մյուս անդամները, որոնցից մեկն էլ Մուրիին էր՝ Հայա/Հայկի երկու տոհմապետ-տեղակալներից մեկը:

Մուրիի և Կադմոսի կրած անունների ներքին՝ սոցիալական հենքով կապի առումով հիշարժան է շուրջ 1000 տարի հետո տեղի ունեցած հրեա Մովսես մարգարեի և նրա տոհմակից ղևտացիների օձապաշտության դեպքը: Աստվածաշնչից հայտնի է Մովսեսի կանգնեցրած պղնձե օձի¹⁰¹ շուրջ 500 տարի հրեաների կողմից պաշտվելու հանգամանքը (այն դարեր անց փշրեց Հուդայի թագավոր Եզեկիան): Մովսեսը և նրա տոհմակից ղևտացիները օձապաշտներ էին¹⁰²: Դրա մասին է վկայում տոհմի մի ձյուդի կրած **ղևտ**- (< *levi) «օձ» նշանակող անունը¹⁰³: «Հաստատված է զարմանալի մի փաստ. պարզվում է, գրում է Զենոն Կոսիդովսկին, - որ ղևտացիները հաճախ են կրել այնպիսի անուններ, որն իր արմատի մեջ պարունակել է «օձ» նշանակությունը»¹⁰⁴:

Պատմական Հայկի շրջապատից և նրա հայրենի երկրից բերված սեպագրային հատուկ անունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանությունները գալիս են ապացուցելու, որ Հայկազանց Արմի և Արման երկրների մ. թ. ա. 25-24-րդ և հետագա դարերի բնակչությունն ունեցել է հնդեվրոպական-հայկական ծագում, հայախոս է եղել¹⁰⁵: Պատմական Հայկի միավորիչ գործունեության հետևանքով

նրանց տիրույթները եռադասության տեսանկյունից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. XIII, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 27-28) զարմանալի կարող է թվալ հունական Καδμοϛ-ի առկայության դեպքում, բայց նույնքան զարմանալի է սրա հնդեվրոպական-հունական զուգահեռի՝ **Բաթմ**-/Βαθμ-ի առկայությունը Արևմտյան Տիգրիսի Բաթման վտակի անվան մեջ: Վերջինի առթիվ ուշադրության է արժանի Կադմոսի կնոջ Αρμον-ια անվան և Arman-um երկրանվան գրեթե նույնականությունը:

100 Տե՛ս **Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ.**, Շիրակում և Վանանդում օձի և օձամանուկի պաշտամունքի շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. XIX, Գյումրի, 2016, էջ 150-158:

101 Տե՛ս Աստուածաշունչ, Թուրք, ԻԱ, 8-9:

102 Տե՛ս նույն տեղում, Ելից, ԼԲ, 27-29:

103 Տե՛ս նույն տեղում, Է, 10-13, 15:

104 **Կոսիդովսկի Զ.**, Բիբլիական ավանդապատումներ, Եր., «Հայաստան» հրատ., 1970, էջ 211-212:

105 Հմմտ. նաև ավելի վաղ շումերների հիշատակած՝ Տիգրիս և Եփրատ գետերի գաղափարագիր DIGNAT և BURANUN անունների հնդեվրոպական-հայկական բնույթը

Արևմտյան Տիգրիսի ավազանից է սկիզբ առել Հայկական լեռնաշխարհի բնակչության «հայկազնացման», այսինքն՝ հայ ժողովրդի կազմավորման աստիճանական գործընթացը: Այն իր արտացոլումն է գտել Հայկի և Հայկազունների մասին Մովսես Խորենացուն և Անանուն պատմիչին (մասամբ) հասած հայոց հնագույն ավանդագրույցներում:

Այսպիսով.

1. Հայոց նախնի Հայկի անվան՝ «Վրաց պատմության» («Քարթլիս ցխովրեբա») մեջ պահպանված **Հսոս** (< *Hay-os) ձևը հիշեցնում է նրա հնագույն տարբերակ Haya-ն (< *Hai-a)՝ հիշատակված էրլայական արձանագրություններում:
2. Մ. թ. ա. III հազարամյակի երրորդ քառորդին Ասորիքի էրլաթագավորության և նրա հյուսիսային հարևան Արմիի միջև գոյություն է ունեցել հակաաքքադական ռազմական դաշինք:
3. Ամենայն հավանականությամբ, էրլան Հայա/Հայկին ձանաչել էր ամբողջ Արմիի (Արևմտյան Տիգրիսից հարավ և հյուսիս) ցեղապետ-արքա: Ի հաստատումն դրա՝ էրլայի թագավոր էրրիումը թանկարժեք նվերներ էր ուղարկել Հայկին:
4. Դաշինք կնքելու համար էրլա ժամանած Մալումը և Մուրին եղել են Հայա/Հայկի տեղակալները՝ Հյուսիսային Արմիի («քոշի» տոհմով) և Հարավային Արմիի («օձի» տոհմով) տոհմապետերը: Նրանք ևս թանկարժեք նվերներ էին ստացել:
5. Հայկը թագադրվել է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Նփրկերտ գավառում, իսկ վախճանվելուց հետո թաղվել է նույն նահանգի Անգեղտուն գավառում:
6. Հողվածում բերված՝ էրլայական և աքքադական սեպագրերով ավանդված հատուկ անունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանությունները գալիս են ապացուցելու, որ պատմական Հայկի հայրենիքի՝ Արևմտյան Տիգրիսի ավազանի մ. թ. ա. III հազարամյակի բնակչությունը պատկանել է հնդեվրոպական-հայկական էթնիկ ընդհանրությանը:
7. Մինևույն ժամանակ պատմական վկայությունների հետ միասին այդ ստուգաբանությունները ցույց են տալիս, որ հայ ժո-

(տե՛ս **Պետրոսյան Ս.**, Դրախտի գետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», 2006, N 2, էջ 249-252):

ղովրդի կազմավորման գործընթացը սկիզբ է առել Արևմտյան Տիգրիսի ավազանում՝ լինելով արդյունքը պատմական Հայկի ծավալած միավորիչ գործունեության:

Սարգիս Գ. Պետրոսյան – հեղինակ է 2 մենագրության և 147 գիտական հոդվածի: Զբաղվում է Հայաստանի և Արևելքի երկրների հնագույն ու հին պատմության, ինչպես նաև հոգևոր մշակույթի հարցերով:

Էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru

Summary

EBLAITE AND AKKADIAN INSCRIPTIONS ABOUT HAYK AND HIS TWO ANCESTORS

Sargis G. Petrosyan (Gyumri)
Doctor of Sciences in History

Key words – Haya/Hayk, Armi, Arman, tribe, genus, Goat, Snake, totem, toponym, anthroponym, Malum, Muri.

In the third quarter of the III millennium BC. in northern Syria, the flourishing and developed city of Ebla was the capital of the eponymous kingdom. Ebla, as well as the neighboring tribal union of Armi, had to resist attacks from the king of Akkad, the despot of all Mesopotamia, Sargon of Akkad. For the same reason, they intended to conclude an anti-Akkadian alliance. The negotiations in Ebla were conducted by the authorized intermediary of Hayk (ebl. Hajja//arm. Hayk) - the king of the union of Armi. To conclude the agreement Hayk sent his deputies, the ancestors of his tribe Malum and Muri, to Ebla.

They concluded an anti-Akkadian military-defensive treaty with the king of Ebla. The etymology of the names Malum and Muri tells us that they were the generation of the same ethno-linguistic environment, i.e. Indo-European-Armenian. They reflect the cult of totems-antonyms of Hayk's tribe - "Goat" and "Snake". In the state archive of Ebla, among thousands of cuneiform tablets, there were also found such tablets, which related to economic calculations. Hayk (ebl. Hajja) and his deputies-ancestors Malum and Muri, are mentioned on them. It was they who

received precious gifts from the state treasury of Ebla. Interestingly, it was intended a gold disc for Haja, weighing 20 sickle (shekel). In our opinion, this is a sign that the king of Ebla (Ebrium?) acknowledged Hayk as the king of the union of the countries of Armi. Hayk was enthroned in the province of Aghdznik, in the Nprkert district of the future Greater Armenia, i.e. in the place where later Tigran the Great (95-55 BC) was crowned, and then built the new capital of Armenia, Tigranakert.

The reign of Hayk is also mentioned in "Kartlis tskhovreba" ("History of Georgia"), which describes the legend about the origin of the Caucasian peoples. It is stated there that after the victory against Nebrot (i.e., Bel) "Haos (i.e., Hayk) announced himself as the king over his brothers, as well as over the other tribes that lived near the border of his kingdom." In this regard it is of great significance to note that the Armenian's ethnarch Hayk, both in the Eblaite text and in the Georgian legend, is named almost the same - Haja (*Haya) and Haos (<*Hay-os). Compare the Armenian Hay-k, and the ending -os in Georgian with Targam-os, Kartl-os, Eger-os. Hayk passed away in the same Aldznik and was buried in the Angeltun district, where there was a cemetery for the kings of the future Great Armenia.

The anthroponyms and toponyms in the article, which have reached us thanks to the Eblaite and Akkadian inscriptions, are etymologized by us with the help of the Indo-European roots of the Armenian language. Their Indo-European-Armenian etymologies prove that in the III millennium BC. the historical motherland of Hayk was inhabited by people who belonged to the Indo-European-Armenian ethnic society.

ПРОТОКОЛЫ НА ЭБЛАЙТСКОМ И АККАДСКОМ ЯЗЫКАХ ОБ АЙКЕ И ДВУХ ЕГО РОДОНАЧАЛЬНИКАХ

Саркис Г. Петросян (Гюмри)
Доктор ист. наук

Ключевые слова – Хайа/Айк, Арми, Арман, племя, род, «Козел», «Змея», тотем, топоним, антропоним, Малум, Мури.

В третьей четверти III тыс. до н.э. в северной Сирии существовал цветущий и развитый город Эбла – столица одноименного царства. Перед Эблей, а также соседним племенным союзом Арми, стояла задача – дать отпор посягательствам со стороны царя Аккада, деспота всей Месопотамии – Саргона Аккадского. Для этого они намеревались заключить антиаккадский союз. Переговоры в Эбле вел уполномоченный предводителя Айка (эбл. Наја//арм. Наук) – царя союза стран Арми. Для заключения договора Айк отправил в Эблу своих заместителей, родоначальников своего племени, Малума и Мури. Они заключили с царем Эблы антиаккадский военно-оборонительный договор. Этимология имен Малум и Мури говорит о том, что они являлись выходцами из одной и той же этноязыковой среды – индоевропейско-армянской. В этих именах отражен культ тотемов-антонимов племени Айка, а именно «Козла» и «Змея».

В государственном архиве Эблы среди многочисленных клинописных табличек обнаружены и такие, которые относились к хозяйственным расчетам. На них упомянуты Айк (эбл. Наја) и его заместители – родоначальники Малум и Мури: именно они получили из государственного казначейства Эблы драгоценные подарки.

Интересно, что для Наја был предназначен золотой диск весом 20 сикль. По нашему мнению, это знак того, что царь Эблы (Эбриум?) признал Айка царем союза племен Арми. Айк был возведен на трон в провинции Алдзник, в уезде Нпркерт будущей Великой Армении, а именно в том месте, где в последствии короновался Тигран Великий (95-55 гг. до н.э.), где позже была построена новая столица Армении Тигранакерт.

О царствовании Айка говорится также в «Картлис цховреба» («История Грузии»), где описано предание о происхождении кавказских народов. Там

мы читаем, что после победы над Небротом (т.е. Белом) «Хаос (т.е. Айк) объявил себя царем над своими братьями, а также и над другими племенами, обитавшими около границ его царства».

С этой точки зрения значительный интерес представляет то обстоятельство, что этнарх армян Айк как в эблаитском тексте, так и в грузинском предании назван почти одинаково – *Наја* (*Науа) и *Haos* (<*Нау-ос). Ср. арм. *Нау-к*, а для окончания *-os* в грузинском ср. *Таргам-ос*, *Картл-ос*, *Эгер-ос*. Айк скончался в том же Алдзнике и был погребен в уезде Ангелтун, где в дальнейшем появилось кладбище царей Великой Армении.

Приводимые в статье антропонимы и топонимы, которые до нас дошли благодаря эблаитским и аккадским надписям, этимологизируются нами при помощи индоевропейских корней армянского языка. Их индоевропейско-армянская этимология доказывает, что в III тыс. до н.э. историческую родину Гайка населяли люди, которые принадлежали к индоевропейско-армянскому этническому сообществу.

REFERENCES

1. “Baḡgirk‘ hayots’”, K‘nnakan bnaḡirē, aḡajabanē yev tsanot‘aḡrut‘yunnerē: **H. Amalyani**, Yer., HSS GA hrat., 1975 (**In Armenian**).
2. “Drevnegrechesko-russkij slovar’”. Sostavil **I. Kh. Dvoreckij**, t. I, M., Gos. izd. inostrannyx i nacionalnix slovarej, 1958 (**In Russian**).
3. “Drevnjaja Ebla (Raskopki v Sirii)”, Sostavlenije i vvedenije **P. Mattie**, Obsh‘aja redakcija i zakljuchitel‘naja stat‘ja **I. M. D‘jakonova**, M., “Progress”, 1985 (**In Russian**).
4. “Hay zhoghovrdakan hek‘iat‘ner”, hat. X, Yer., HSSH GA hrat., 1967 (**In Armenian**).
5. “Hay zhoghovrdi patmut‘yan k‘restomatia”, hat. I: Hnaguyn zhamanaknerits‘ minch‘ev IX dari keserē, kazmoghner: **Hovhannisyan P., Abrahamyan A.**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1981 (**In Armenian**).
6. **Abrahamyan A.**, Hayots‘ gir yev grch‘ut‘yun, Yer., Yerevani hamalsarani hrat., 1973 (**In Armenian**).
7. **Achaḡyan H.**, Hayeren armatakan baḡaran, hat. 1, Yer., Yerevani hamalsarani hrat., 1971, hat. II, Yer., Yerevani hamalsarani hrat., 1973, hat. 3, Yer., Yerevani hamalsarani hrat., 1977, hat. 4, Yer., Yerevani hamalsarani hrat., 1979 (**In Armenian**).
8. **Achaḡyan H.**, Hayots‘ andznanneri baḡaran, hat. IV, Yer., Yerevani hamalsarani hrat., 1948 (**In Armenian**).
9. **Achaḡyan H.**, Hayots‘ grerē. Ts‘uts‘ak haykakan hin nshanagreri, Yer., Yerevani hamalsarani hrat., 1984 (**In Armenian**).
10. **Adonc N.**, Armenija v epoxu Justiniana, Izdanije vtoroje, Jer., izd. Jerevanskogo universiteta, 1971 (**In Russian**).
11. **Adonts‘ N.**, Hayastani patmut‘yun. Akunk‘nerē X-VI dd. m.t‘.a., Yer., “Hayastan” hrat., 1972 (**In Armenian**).
12. **Arki A.**, Zametki o geografičeskom krugozore tekstov Ebly III tysjacheletija do n. e., “Drevnjaja Ebla (Raskopki v Sirii)”, M., “Progress”, 1985 (**In Russian**).

13. **Arutjunjan N.**, Biajnili (Urartu). Vojenno-politicheskaja istorija i voprosy toponomiki, Jer., izd. AN Arm. SSR, 1970 **(In Russian)**.
14. **Aslanyan A., Grgearyan H.**, Haykakan SSH ashkharhagrakan anunneri hamarot bararan, Yer., HSSH GA hrat., 1981 **(In Armenian)**.
15. Astuatsashunch‘, Tsnndots‘ **(In Armenian)**.
16. Astuatsashunch‘, Tuots‘ **(In Armenian)**.
17. **Avdijev V.**, Istorija drevnego Vostoka, L., Gos. izd. politicheskoy literatury, 1953 **(In Russian)**.
18. **Awetik‘ean G., Siwrmelean Kh., Awgorean M.**, Nor bargirk‘ haykazean lezui, hat. II, Yer., Yerevani hamalsarani hrat., 1981 **(In Armenian)**.
19. **D‘jakonov I.**, Assiro-vaviloniskije istochniki ob istorii Urartu, “Vestnik drevnej istorii”, 1951, N 2-4 **(In Russian)**.
20. **Gamkrelidze T., Ivanov V.**, Indojevropejskij jazyk i indojevropejcy, t. I-II, Tb., Izd. Tbilisskogo universiteta, 1984 **(In Russian)**.
21. **Garelli P.**, Zamechanija po toponomike iz arxivov Ebly, “Drevnjaja Ebla (Raskopki v Sirii)”, M., “Progress”, 1985 **(In Russian)**.
22. **Ghanalanyan A.**, Avandapatum, Yer., HSSH GA hrat., 1969 **(In Armenian)**.
23. **Hakobyan G.**, Nerk‘in Baseni azgagrut‘yunē yev banahyusut‘yunē, Yer., “Hayastan” hrat., 1974 **(In Armenian)**.
24. **Harut‘yunyan S.**, Hay zhoghovrdakan hanelukner, Yer., HSSR GA hrat., 1965 **(In Armenian)**.
25. **Hmayakyan S.**, Vani t‘agavorut‘yan petakan kronē, Yer., Hayastani GA hrat., 1990 **(In Armenian)**.
26. **Hovhannisyan L.**, Grabari bararan. Nor haykazyan bararanum ch‘vkayvats barer, Yer., HH GA hrat., 2010 **(In Armenian)**.
27. **Ivanov V.**, Vydelenije raznyx xronologicheskix sloyev v drevnearmjanskom i problema pervonachal‘noj struktury teksta gimna Va(x)agnu, “Haykazuniner. Nvirvum ē Hayots‘ dzori chakatamarti 4500-amyakin”, Yer., HH GA “Gitut‘yun” hrat., 2013 **(In Russian)**.
28. **Jahukyan G.**, Hayeren stugabanakan bararan, Yer., “Asoghik” hrat., 2010 **(In Armenian)**.
29. **Jahukyan G.**, Hayerenē yev hndevropakan hin lezunerē, Yer., HSSH GA hrat., 1970 **(In Armenian)**.
30. **Jahukyan G.**, Hayots‘ lezvi patmut‘yun. nakhagrayin zhamanakashrjan, Yer., HSSH GA hrat., 1987 **(In Armenian)**.
31. **Kapancjan Gr.**, Istoriko-lingvisticheskije raboty k nachal‘noj istorii armjan, Jer., izd. AN Arm. SSR, 1956 **(In Russian)**.
32. **Karakhanyan G., Safyan P.**, Syunik‘i zhayrapatkernerē, “Hayastani hnagitakan hushardzannerē”, 4, Yer., HSSH GA hrat., 1970 **(In Armenian)**.
33. **Kosidovski Z.**, Bibliakan avandapatumner, Yer., “Hayastan” hrat., 1970 **(In Armenian)**.
34. **Malkhaseants‘ St.**, Hayerēn bats‘atrankan bararan, hat. I, Yer., HSSR petakan hrat., 1944, hat. III, Yer., HSSR petakan hrat., 1944, hat. IV, Yer., HSSR petakan hrat., 1945 **(In Armenian)**.
35. **Manandyan H.**, Tigran Yerkrordē yev Hromē, Yer., “Armfani” hrat., 1940 **(In Armenian)**.
36. **Martirosyan H., Israyelyan H.**, Geghama lerner i zhayrapatkernerē, “Hayastani hnagitakan hushardzannerē”, 6, Yer., HSSH GA hrat., 1971 **(In Armenian)**.
37. **Melikishvili G.**, Urartskije klinoobraznyje nadpisi, M., izd. AN SSR, 1960 **(In Russian)**.
38. **Mellaart Dzh.**, Drevnejshije civilizacii Blizhnego Vostoka, M., izd. “Nauka”, 1982 **(In Russian)**.

39. **Movsisi Khorenats'woy** patmut'iw n Hayots', k'nnakan bnagirē: **M. Abeghyani yev S. Harut'yunyani**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1981 (**In Armenian**).
40. **Movsisyan A.**, Hayastanē K'ristosits' arāj yerrord hazaramyakum (ēst gravor aghbyurneri), Yer., YEPH hrat., 2005 (**In Armenian**).
41. **Nikonov V.**, Lichnoje imja-social'nyj znak, "Glazami etnografov", M., izd. "Nauka", 1982 (**In Russian**).
42. **P'awstosi Biwandats'woy** patmut'iw n Hayots', Bnagirē: **K'. Patkanyani**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1987 (**In Armenian**).
43. **Perixanjan A.**, Aramejskaja nadpis' iz Zangezura, "Patma-banasirakan handes", Yer., 1965, N 4, ēj 107-128 (**In Russian**).
44. **Petrosean S.**, Hin hayots' yeramasn amsuay khorhurdē, "Handēs amsōreay", Vienna, 1996, N 1-12, ēj 420-440 (**In Armenian**).
45. **Petrosjan S.**, Drevnejshije nazvanija Chjornogo morja, ozer Urmija i Van v svete mifologicheskix predstavlenij drevnix armjan, "Lraber" has. git., Yer., 1986, N 4, ēj 53-64 (**In Russian**).
46. **Petrosjan S.**, Plemennoj sojuz Xayasa-Azzi v sisteme dvoichnyx protivopostavlenij, "Lraber" has. git., Yer., 1987, N 3, ēj 77-87 (**In Russian**).
47. **Petrosyan L.**, Yervanduni t'agavorneri t'agadzman hnaravor vayri masin, HH GAA SHHH kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. 2 (23), Gyumri, 2020, ēj 87-97 (**In Armenian**).
48. **Petrosyan S.**, "Aspet" titghosi yev "aspetut'iw n" gortsakalut'yan nakhnakan bnuyt'i parzabanman p'ordz, "Lraber" has. git., Yer., 1983, N 4, ēj 77-86 (**In Armenian**).
49. **Petrosyan S.**, Aramanyaki vordinerē yev nrants' tiruyt'nerē yeradasut'yan tesankyunits', HH GAA SHHH kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. XIII, Yer., HH GA "Gitut'yun" hrat., 2010, ēj 24-33 (**In Armenian**).
50. **Petrosyan S.**, Daserē yev yeradasut'yan drsevorunnerē Hin Hayastanum, Yer., HH GAA PI hrat., 2006 (**In Armenian**).
51. **Petrosyan S.**, Drakhti geteri yev Khavila, K'ush yerkrneri teghadrut'yan shurj, "Patmabanasirakan handes", Yer., 2006, N 2, ēj 237-255 (**In Armenian**).
52. **Petrosyan S.**, Geghami, Sasaki yev Veduri-Ēt'iuni ts'eghakhmbi pashtamunk'i masin, "Haykazuniner", Yer., HH GA "Gitut'yun" hrat., 2013 (**In Armenian**).
53. **Petrosyan S.**, Hayots' mehenagrut'yan akunk'nerum, Gyumri, "Dpir" hrat., 2008 (**In Armenian**).
54. **Petrosyan S.**, Khet'akan ark'a Supiluliuma I-i knik'i yev haykakan yerknayin khorhrdandshanneri ēndhanrut'yunnerē, "Vēm", Yer., 2020, N 1, ēj 21-52 (**In Armenian**).
55. **Petrosyan S.**, Merdzsevyanyan ts'egheri miut'yunē Haykakan lepnashkharhi hyusis-arevelk'um (m. t. a. VI-V dd.), "Patma-banasirakan handes", Yer., 1976, N 1, ēj 187-198 (**In Armenian**).
56. **Petrosyan S.**, Patmakann u arāspelabanakanē Vardges Manuki avandazruyts'um, HH GAA SHHH kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. XV, Yer., HH GA "Gitut'yun" hrat., 2013, ēj 27-32 (**In Armenian**).
57. **Petrosyan S., Petrosyan L.**, Shirakum yev Vanandum ōdzi yev ōdzamanuki pashtamunk'i shurj, HH GAA SHHH kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. XIX, Gyumri, 2016, ēj 151-160 (**In Armenian**).
58. **Petrosyan S.**, Vipakan Haykē, patmakan Haykē yev nra zharangut'yunē, "Vēm", Yer., 2022, N 1, ēj 21-52 (**In Armenian**).
59. **Piotrovskij B.**, Vanskoje carstvo (Urartu), M., izd. Vostochnoj literatury, 1959 (**In Russian**).
60. **Sargsyan G.**, Hellenistakan darashrjani Hayastanē yev Movses Khorenats'in, Yer., HKHSH GA hrat., 1966 (**In Armenian**).

61. **Sebēosi yepiskoposi** Patmut'iwñ, Baghdatur'eamb dzeragrats' handerdz arajabaniw yew tsanot'agrut'eambk' i dzerñ **St. Malkhaseants'**, Yer., Armfani hrat., 1939 **(In Armenian)**.
62. **Shifman I.**, Rashap, "Mify narodov mira. Enciklopedija", t. II, M., izd. "Sovetskaja Enciklopedija", 1988 **(In Russian)**.
63. **Srvandztyants' G.**, Yerker, hat. I, Yer., HSSH GA hrat., 1978, hat. II, Yer., HSSH GA hrat., 1982 **(In Armenian)**.
64. **Strabon**, K'aghets' yev t'argmanets': **H. Acharyan**, Yer., Yerevani hamalsarani hrat., 1940 **(In Armenian)**.
65. **Toporov V.**, Purusha, MNM, t. II, M., izd. "Sovetskaja Enciklopedija", 1988 **(In Russian)**.
66. **Yeremyan S.**, Hayastanē ēst "Ashkharhats'oyts"-i, Yer., HSSR GA hrat., 1963 **(In Armenian)**.
67. **Yesayan S.**, Hayastani hnagitut'yun, prak I: K'ari dar-Ush bronzi dar, Yer., HH GAA hrat., 1992 **(In Armenian)**.